Ապառաժ

Հիմնադրված է 1991 թվականին: 12 (533) հուլիսի 1-17, 2023թ.

ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀՅ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

Համաժողովրդական անժամկետ շարժում Արցախում

Հուլիսի 13-ի երեկոյան Արցախի Հանրապետության պետական նախարար Գուրգեն Ներսիսյանը հանդես է եկել համաժողովրդական պայքարի կոչով: «Ադրբեջանի կողմից Արցախի ժողովրդին պատանդառելու եւ Հայաստանի հետ կապող ճանապարհը արգելափակելու հետեւանքով հումանիտար իրավիճակն Արցախում օր օրի վատանում է, իսկ այսպես շարունակվելու դեպքում ունենալու ենք ծանր ու անդառնալի հետեւանքներ, որը մենք թույլ տալ չենք կարող, ուստի վաղվանից սկսում ենք համաժողովրդական անժամկետ շարժում»,- իր կոչում նշել է պետնախարարը:

Հաջորդ օրը՝ հուլիսի 14-ին, Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում մեկնարկել է բազմահազարանոց հանրահավաքը Արցախի ապաշրջափակման պահանջով:

Հանրահավաքին մասնակցում էին նաեւ Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանը, Ազգային ժողովի նախագահ Արթուր Թովմասյանը, օրենսդիր եւ գործադիր իշխանությունների ներկայացուցիչները:

Ներկաները միացել են Ծոշկավանքի եւ շրջակա գյուղերի հոգեւոր հովիվ Տեր Ներսես Գարեգին Ասրյանի միասնական աղոթքին, որից հետո Տեր Ներսեսը հանդես է եկել ելույթով:

«Խոսքս պետք է սկսեմ առանց նախաբանի՝ մեր պատմությանը հետադարձ հայացքով, հատկապես՝ վերջին հազարամյակներին, որին ինչ-որ առումով կարելի է բնորոշել՝ որպես կորուստների մի պատմություն: Ժամանակ առ ժամանակ մեր հսկայական հայրենիքից պարբերաբար հատվածներ ենք կորցնում, մեզ համար նվիրական հայրենիքի մասեր: Որոշ մասը կորցրել ենք ծանր պայքարի մեջ, բայց երբեմն այն զիջել ենք ինչ-որ առումով՝ հուսալով, որ մեզ հանգիստ կթողնեն, վերջապես խաղաղություն կունենանք: Եվ հետո սկսել ենք մեր կորցրած հայրենիքի տեղանուններով, իբրեւ սփոփանք՝ խանութներ, հացատներ, փողոցներ եւ այլ օբյեկտներ անվանակոչել, կարոտաբաղձ երգեր հորինել. սա ինքնախաբեություն է»,- նշել է Ներսես քահանա Ասրյանը:

Նրա խոսքով՝ այսօր կանգնած ենք ճակատագրական պահի, բայց պետք է գիտակցենք, որ ուրիշ Արցախ այլեւս չենք կարող ունենալ, ոչ մի բան չի կարող փոխարինել մեր հայրենիքին, ինչպես որ վաղը ոչ մի բան չի կարող փոխարինել Սյունիքին, Տավուշին, Գեղարքունիքին, Հայաստանին:

«Մենք վերջապես պետք է հասկանանք, որ մեր թշնամու համար բացարձակապես նշանակություն չունեն մեր քաղաքական նախասիրությունները, կուսակցական պատկանելությունը, կրոնական, դավանական հայացքները, մեզ ցանկանում են վերացնել՝ որպես տեսակ, եւ բռնազավթել մեր հայրենիքը, իսկ մեր մնացորդը լավագույն դեպքում պետք է վերածվի աշխարհով մեկ սփռված նորօրյա գնչուների՝ զուրկ արմատներից, հայրենիքից ու ազգային արժանապատվությունից»,- ասել է Տեր Ներսես քահանա Ասրյանը:

Նա նշել է, որ այսօր ժամանակն է վերջապես հասկանալ այս իրողությունը, ու այս իրողության շուրջ կարողանալ համախմբվել: «Այո, ծանր է մեր վիճակը, բայց անհույս վիճակներ երբեք չկան, երբ որ ազգը համախմբված է՝ հույսը դնելով բացառապես իր եւ Աստծո վրա»,- նշել է նա:

Վերածննդի հրապարակում ելույթ է ունեցել նաեւ ԱՀ մարդու իրավունքների պաշտպան Գեղամ Ստեփանյանը: Նրա խոսքով՝ Արցախի 7 ամիս շարունակվող ամբողջական շրջափակումը հասել է օրհասական կետի, երբ լրջագույնս վտանգված է 120 հազար մարդու, այդ թվում՝ 30 հազար երեխաների, 20 հազար տարեցների կյանքը.

«Երբ այլեւս մի ողջ ժողովրդի գլխին կախված են գոյաբանական սպառնալիքներ, որոնք անհերքելի են եւ ընդգծված: Գտնվելով շրջափակման մեջ եւ հունիսի 15-ից ամբողջությամբ կտրվելով հումանիտար հասանելիությունից՝ մեր ժողովուրդը կանգնել է թերսնուցման, սովի, Ադրբեջանի կողմից անթաքույց իրականացվող էթնիկ զտման, բռնի հպատակեցման եւ ցեղասպանության իրականացման անհերքելի սպառնալիքի ներքո:

Այսօր ահազանգի կոչնակը հնչեցնելու հերթական պահն է: Դիմում եմ միջազգային հանրության բոլոր դերակատարներին. Մարդու իրավունքնե՞ր, ասում եք: Ուրեմն՝ ասեք ինձ՝ ես ինչպե՞ս նայեմ այս ժողովրդի աչքերին եւ ասեմ, որ իրենք էլ ունեն իրավունքներ: Ես ինչպե՞ս նայեմ թերսնուցման մեջ գտնվող հղի կնոջ աչքերին, որի երեխան կարող է արատներով ծնվել: Ես ինչպե՞ս նայեմ այն մայրերի աչքերին, որոնց օրվա ամենամեծ երազանքը իրենց երեխայի համար մի բուռ միրգ կամ քաղցրավենիք հայթայթելն է:

Ես ինչպե՞ս նայեմ հերթերում կանգնած հազարավոր մարդկանց աչքերին, որոնք ժամերով հերթ են կանգնում մի բուռ շաքարավազ կամ ձեթ ստանալու համար: Եվ վերջապես, ես ինչպե՞ս նայեմ այս հողակտորի համար իր ամենաթանկը տված, զոհվածի մոր աչքերին, որն ահաբեկված աչքերով նայում է ինձ՝ վախենալով, որ կկորցնի իրեն մնացած վերջին սրբությունը՝ որդու գերեզմանը:

Ես ուզում եմ, որ դո՛ւք նայեք նրանց աչքերին, դո՛ւք պատասխանեք նրանց, որովհետեւ ես այլեւս պատասխաններ չեմ գտնում: Գեղեցիկ ու շքեղ դահլիճներում մարդու իրավունքներից խոսելը մի բան է, այդ իրավունքների պաշտպանությունը գործնական քայլերով ապացուցելը՝ մեկ այլ բան:

Մտահոգված ենք, խիստ մտահոգված ենք, խորապես մտահոգված ենք, կոչ ենք անում եւ նմանատիպ այլ հայտարարություններ:

Բա՛վ է, հերի՛ք է: Մինչ դուք մերկապարանոց մտահոգություններ եք հայտնում, 120 հազար մարդ մատնվում է անմարդկային զրկանքների»,- ասել է Գեղամ Ստեփանյանը:

Նա նաեւ դիմել է ռուս խաղաղապահներին, որոնց 2020 թվականի եռակողմ հայտարարությամբ վերապահվել է Արցախի ժողովրդի կյանքի իրավունքի եւ ֆիզիկական գոյության հիմնական երաշխավորի դերը. «Մեզ խաղաղություն էր խոստացվել: Խաղաղությունը ամեն օր տեղեկագրերում հրադադարի ռեժիմի խախտումների արձանագրումը չէ: Խաղաղությունը ամենօրյա հաց հայթայթելով ֆիզիկական գոյություն քարշ տալը չէ, խաղաղությունը սեփական հայրենիքում պատանդառված եւ ամեն ինչից զրկված լինելը չէ: Խաղաղությունը ամեն օր հոգեբանական հարձակումների եւ մեզ վրա թափվող անորոշությունները չեն: Տե՛ր կանգնեք ձեր մանդատին՝ ապահովելու իրական խաղաղություն, ապահովելու բարեկեցիկ կյանք, որ խոստացել եք մեր ժողովրդին ամենաբարձր մակարդակով»:

Նա դիմել է նաեւ Հայաստանի ժողովրդին. «Ինչպես միշտ, այս անգամ էլ կանգնեք՝ ի պաշտպանություն Արցախի, մենակ մի՛ թողեք Արցախում ապրող հային իր սրբագույն երազանքի հետ մեն միայնակ»:

Դիմելով Սփյուռքում ապրող մեր հայրենակիցներին, Գեղամ Ստեփանյանը խնդրել է վեր ելնել՝ կանխելու հայ ժողովրդի նոր ցեղասպանությունը, պարտադրելու աշխարհին գո՛նե այս անգամ պատասխանատվություն ստանձնել հայի ճակատագրի համար:

Ստեփանյանը շարունակել է՝ եթե աշխարհի շատ ժողովուրդների պետությունն ու պետականությունը մատուցվել է սկուտեղի վրա, ապա Արցախը վաստակել է իր ինքնորոշման իրավունքը:

➔ 2

Համաժողովրդական անժամկետ շարժում Արցախում

1← «Արցախյան բոլոր պատերազմներում վճարված թանկ գինը, 7-ամսյա շրջափակումն աղաղակող փաստեր են, որ մենք չենք կարող լինել Ադրբեջանի կազմում, չենք կարող եւ վերջ: Վերջապես հասկացեք: Բոլոր նրանք, ովքեր դեռ իլյուզիաներ ունեն այս առումով, թող պատասխանեն՝ արդյո՞ք հնարավոր էր պատկերացնել հրեաների կյանքը նացիստական Գերմանիայում: Այո, Ադրբեջանն այդ նույն նացիստական երկիրն է, որտեղ հասարակությունն ամբողջությամբ ներծծված է հայատյացությամբ, հայի նկատմամբ ատելությամբ ու թշնամանքով: Բոլորը դրանում վաղուց արդեն համոզված պետք է լինեին: Սա 21-րդ դարի ամենամեծ ողբերգություններից մեկն է: Ուրեմն, վերջ տվեք խոսելուն, անհապաղ եւ կոնկրետ գործողություններ ձեռնարկելը ցպահանջ է՝ Արցախում ողբերգությունը կանխելու համար: Անտարբերությունը հավասար է մեղսակցության: Եվ հիշեք՝ անպատիժ հանցագործությունը կրկնվող հանցագործություն է: Այսուհետ մեր անցյալը, ներկան ու ապագան նաեւ ձեր ձեռքերում է»,- շեշտել է Արցախի ՄԻՊ-ը:

«Արցախն ապրելու է, հարատեւելու է՝ ի հեճուկս բոլոր չկամների ու թշնամիների, եւ ի փառս համայն հայության»,- խոսքը եզրափակել է Գ. Ստեփանյանը:

ԱՀ պետական նախարար Գուրգեն Ներսիսյանը նշել է, որ արցախցին ոտքի է ելել հայտարարելու, որ բավ է. «Ադրբեջանն ու աշխարհն ուզում են Արցախը դարձնել զոհասեղան, որի վրա դրված է մեր հայրենակիցների, մեր երեխաների կյանքը, եւ մենք դա թույլատրել չենք կարող: Եթե 2022 թվականի դեկտեմբերի 12-ին արցախցին ստիպված էր թերսնվել, եթե առողջական խնդիրներ ունեցող մեր տարեցները, երեխաները, ծնողները հարկադրված էին անցնել ծանրագույն կենսական խնդիրների միջով, ապա 2023 թվականի հունիսի 15-ից մեր ժողովրդին կանգնեցրել են ֆիզիկական գոյությանն սպառնացող վտանգի առաջ: Գրեթե մեկ ամիս է, ինչ Արցախն ապրում է ներքին ռեսուրսների հաշվին: Այդ ընթացքում բոլորիս համատեղ ջանքերով փորձել ենք իրավիճակը պահել այնպես, որպեսզի Արցախի շրջափակման այս ծանրագույն հետեւանքները նվազագույն ազդեցություն ունենան արցախցու վրա՝ հույս ունենալով, որ ամենակարճ ժամկետում միջազգային հանրությունը, ՌԴ-ն, ՀՀ-ն վճռական քայլեր կձեռնարկեն այս մահաբեր աղետի ընթացքը կանգնեցնելու համար: Բայց պարզվեց, որ բոլորն ընդամենը դիտորդի կարգավիճակով են հետեւում այդ ամենին»,-նշեց պետնախարարը՝ հավելելով, որ այսօր իրավիճակն արդեն օրհասական է, իսկ յուրաքանչյուր վաղվա օրը լինելու է էլ ավելի ծանր ու դժվար:

Նրա խոսքով՝ արդեն կան առողջապահական բազմաթիվ խնդիրներ, բազմաթիվ համայնքներ հաջորդաբար զրկվում են խմելու ջուր ունենալու հնարավորությունից: Մայրաքաղաքից հեռու գյուղական համայնքների բնակիչները դարձել են գերիներ, եւ շատերի՝ շրջկենտրոնների ու մայրաքաղաքի հետ միակ կապը հեռախոսագանգն է: Շուշիի շրջանի գյուղերի բնակիչները դարձել են պատանդ՝ ծայրահեղ բոլոր դրսեւորումներով: Սկզբնական շրջանում կրճատվել, իսկ հիմա դադարեցվում են միջհամայնքային ուղեւորափոխադրումները, մանկապարտեզներում երեխաները գրեթե չեն սնվում, հիվանդանոցներում հիվանդներին տրվում է չնչին քանակի սնունդ: Օրեր անց չեն աշխատելու շտապօգնության մեքենաները, մարդիկ ունենալու են տարրական դեղորայքի անհասանելիության խնդիր:

«Ես հիմա հարց եմ ուզում ուղղել միջազգային հանրությանը, Հայաստանի Հանրապետությանն ու Ռուսաստանի Դաշնությանը՝ ձեզ ի՞նչ է անհրաժեշտ, ինչի՞ն եք սպասում: Ուզում եք այս հրապարակում մենք մարդկանց դիակներ ունենա՞նք, որ արձագանքեք: Ուզում եք մեր երկրում մանկահասակների մահվան դեպքի կրկնություններ լինե՞ն, որ խելքի գաք: Եվ ես ձեր բոլորի անունից ասում եմ՝ բավական է: Արդեն երրորդ տարին է՝ արցախցին համբերատար կրում է ամենատարբեր բնույթի տառապանքներ: Մենք ուշիուշով հետեւում ենք աշխարհի այս կամ այն կետում կազմակերպվող հանդիպումների արդյունքներին: Հետեւում ենք, թե ինչպես են միմյանցից խլում այս կամ այն քննարկման հարթակը, նախաձեռնությունների պայքար տանում, միջնորդական ջանքերի մարտեր վարում: Հետեւում ենք, բայց ոչ արդյունքն ենք տեսնում, ոչ՝ ազդեցությունն զգում, իսկ երբ այդ հանդիպումներում հանկարծ առաջանում են տարաձայնություններ, անհամաձայնություններ եւ հարկ է լինում որեւէ մեկի վրա ճնշում գործադրել, ապա մուրճի ողջ հարվածն իջնում է արցախցու գլխին: Եվ նորից ձեր բոլորի անունից ուզում եմ գոռալ՝ մենք արդեն հասել ենք համբերության եզրագծին եւ այլեւս զրկանքների հաշվին ի վիճակի չենք ձեզ ընձեռել քաղաքական մանյովրեր կատարելու հնարավորություններ»,- ասել է պետական նախարարը:

Այնուհետեւ հանրահավաքի մասնակիցները շարժվել են դեպի Կարմիր խաչի Արցախի գրասենյակ: Կառույցի պատասխանատուների հետ հանդիպման ժամանակ պետնախարար Գուրգեն Ներսիսյանն ակնկալիք է հայտնել, որ սեփական նախաձեռնությամբ ԿԽՄԿ-ի միջոցով ամենասեղմ ժամկետում Արցախում ստեղծված իրավիճակի վերաբերյալ օբյեկտիվ, իրավիճակն ամբողջովին ներկայացնող տեղեկություններ կփոխանցվեն միջազգային կազմակերպություններին:

Պահանջները ներկայացնելուց հետո շարժման մասնակիցները քայլերթով շարժվել են դեպի Ռուս խաղաղապահ զորակազմի տեղակայման վայր:

ԱՀ պետական նախարար Գուրգեն Ներսիսյանի, Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպան Գեղամ Ստեփանյանի, ներքին գործերի նախարար Կարեն Սարգսյանի եւ Ազգային ժողովի «Ազատ Հայրենիք-ՔՄԴ» խմբակցության ղեկավար Արթուր Հարությունյանի մասնակցությամբ հանդիպում է կայացել Արցախում ռուսական խաղաղապահ ուժերի հրամանատար Ալեքսանդր Լենցովի եւ այլ ներկայացուցիչների հետ: Ա.Լենցովին է ներկայացվել Արցախում ստեղծված իրավիճակը, Արցախում մեկնարկած համաժողովրդական շարժման մասնակիցների պահանջը: Ա.Լենցովը հայտնել է, որ իրավիճակի վերաբերյալ պարբերաբար տեղեկություններ է փոխանցում Մոսկվա, ընդունել է, որ Արցախում հումանիտար ճգնաժամ է, որն ամեն րոպե խորանում է, արգելափակված է Արցախը Հայաստանին միացնող ճանապարհը, խախտված է Եռակողմ հայտարարության 6-րդ կետը: Ա.Լենցովը հավաստիացրել է, որ իրավիճակի հետագա զարգացումների վերաբերյալ տեղեկություններն այսուհետ վերադասին են փոխանցվելու անընդհատ եւ քայլեր են ձեռնարկվելու ծագած խնդիրները կարգավորելու ուղղությամբ:

Որոշվել է, որ Ասկերանից շրջանից ակցիային միացած բնակիչները կմնան ռուս խաղաղապահ զորակազմի տեղակայման վայրի տարածքում՝ մինչեւ հստակ լուծումներ չտրվեն հարցին, իսկ շարժման մասնակիցները վերադարձել են Ստեփանակերտ: Վերածննդի հրապարակում տեղադրվել են վրաններ՝ համաժողովրդական շարժումը շարունակելու նպատակով:

Վառելիքի սղության պատճառով հնարավորություն չունենալով հասնել մայրաքաղաք, բազմահազարանոց քայլերթեր ու հանրահավաքներ են տեղի ունեցել Մարտունի եւ Մարտակերտ քաղաքներում:

ԱՀ նախկին պետական նախարար Ռուբեն Վարդանյանը հայտարարել էր, որ Արցախի անվտանգության եւ զարգացման ճակատը մասնակցելու է հանրահավաքին: Հավաքից հետո Ճակատը հանդես է եկել հայտարարությամբ՝ նշելով, որ այն անդառնալիության շեմին հասած Արցախում օրեցօր ուժգնացող մարտահրավերները արժանապատվությամբ հաղթահարելու եւ ինքնորոշման իրավունքի համար պայքարը շարունակելու բացառիկ հնարավորություն կարող էր դառնալ:

««Արցախի անվտանգության եւ զարգացման ճակատ» հանրային շարժումը, երկրի համար բախտորոշ այս օրերին պայքարի իր բանաձեւը բազմիցս հնչեցրել է եւ պատրաստակամություն հայտնել՝ կանգնել յուրաքանչյուրի կողքին, ում պարզած պաստառին գրված է՝ «Ազատ, անվտանգ, երջանիկ ու հայկական Արցախ»: Հենց այս դիրքորոշմամբ շարժման մասնակիցներն առաջիններից էին, որ արձագանքեցին համաժողովրդական հանրահավաքի կոչին, սակայն ստիպված ենք ափսոսանքով արձանագրել երկրի իրական վիճակի ու հանրահավաքին հնչած ուղերձների անհամաչափության փաստը:

Մենք անընդունելի ենք համարում, որ այս պատասխանատու իրավիճակում Արցախի Հանրապետության նախագահն իր խոսքը չուղղեց ժողովրդին եւ նման օրհասական պահին նրա լռությունն արդարացված չէր:

Հանրահավաքին կոչ հնչեց՝ ուղղված բոլորին, բացի ՀՀ կառավարությանը, որը փաստացի ճանաչել է Արցախը՝ որպես Ադրբեջանի մաս:

Ոչ մի ուղերձ չհնչեց վաղը Բրյուսելում սպասվող բանակցություններին ընդառաջ:

Դատապարտելի ենք համարում, որ չհնչեց որեւէ խոսք՝ ի աջակցություն Արցախի իրավունքները պաշտպանող ՀայաՔվեի գործընթացի:

- Մենք չենք կարծում, որ մինչեւ վերջ անկեղծ զրույց գնաց ժողովրդի հետ: Անընդունելի ենք համարում հուսահատության տանող տրամադրություններ սերմանելը. 90-ականներին մենք շատ ավելի բարդ իրավիճակներ ենք հաղթահարել, եւ դա հաջողվել է անվերապահ միասնության շնորհիվ:

Այս համատեքստում հայտարարում ենք, որ մեզ համար կարմիր գիծ է՝ Ադրբեջանի կողմից առաջարկվող Աղդամ-Ստեփանակերտ երթուղին, եւ մենք թույլ չենք տալու հատել այն, որովհետեւ պատմությամբ հաստատված փաստ է՝ Աղդամի ճանապարհը՝ ճանապարհ է դեպի Սումգայիթ»,- ասվում է հայտարարության մեջ:

ԱՀ պետական նախարար Գուրգեն Ներսիսյանի կոչով հուլիսի 15-ին Վերածննդի հրապարակում նորից հրավիրվել է հանրահավաք: Ներկայացնելով տիրող սոցիալ-տնտեսական ծանր վիճակը, ԱՀ պետական նախարարը նշել է, որ ամենատարբեր հարթակներում պարբերաբար հնչում են հայտարարություններ, տրվում են մեկնաբանություններ, որոնց հետեւանքով ունենք բազմաթիվ բազթողումներ բանակցային այս կամ այն գործընթացներում, որոնց ներգավված է Հայաստանի հանրապետությունը: «Ուզում եմ հայտարարել, որ Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքը սակարկման առարկա չէ, որ Արցախի ժողովուրդն ինքնորոշման իրավունքը վաստակել ու այն իրացրել է: Արցախի ժողովրդի անունից արվող ցանկացած զիջողական հայտարարություն, ցանկացած զիջողական որոշում առ ոչինչ է: Թող որեւէ մեկը իրեն թույլ չտա սակարկելու, քննարկելու կամ զիջելու առարկա դիտարկել մեր ժողովրդի ինքնորոշման իրավունքը եւ սեփական ճակատագիրը տնօրինելու իրավունքն ու ազատությունը»:

Գուրգեն Ներսիսյանի խոսքով՝ հետպատերազմյան շրջանում բազմաթիվ հայտարարություններ են հնչել՝ ՀՀ իշխանությունների կողմից նշաձող իջեցնելու, Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը ճանաչելու մասին, բայց այդ ամենից հետո այդպես էլ խաղաղություն, բարիդրացիական հարաբերություն, բարի ու խաղաղասեր վերաբերմունք չի եղել: «Հիմա, այս դեպքում Արցախի ժողովուրդն իրավունք ունի հրապարակայնորեն հարցնելու՝ հանուն ինչի՞ են կատարվում այդ զիջումները, եթե դրա հետեւանքով Արցախի ժողովուրդը ոչ միայն ամեն օր տուժում է, այլեւ ամեն օր ծանրանում է Արցախի ժողովրդի ուսերին թողնված բեռը, զրկանքների ու տառապանքների մեջ են գտնվում Արցախում գտնվող երեխաները: Եթե մենք խաղաղություն ենք ուզում այսպիսի գնով, ուրեմն խաղաղություն պետք չէ, մեզ պետք է արժանապատիվ խաղաղություն, սեփական իրավունքները եւ սփական ճակատագիրը տնօրինելու իրավունքը հարգելու գնով»,- ասել է պետական նախախարը՝ կոչ անելով անկախ տեղի ունեցող իրադարձություններից երբեք չվհատվել, քանի որ Արցախի ժողովուրդն ունակ է սեփական պայքարով, սեփական օրինակով դաստիարակելու ու բացատրելու բոլորին, ցույց տալու ճշմարիտ ուղին, որը կարող է տանել դեպի հաղթանակ: Պետական նախարարն ավելացրել է, որ իրադարձությունները զարգանում են ամեն օր, ամեն ժամ ու պետք է պատրաստ լինել ցանկացած իրավիճակում հավաքվելու, երկխոսելու, լսելու միմյանց կարծիքը եւ ընդունելու որոշումներ:

Հուլիսի 17-ին բողոքի ցույցեր են տեղի ունեցել Երեւանում՝ ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի, Հայաստանում ՌԴ դեսպանատան առջեւ՝ Արցախի ապաշրջափակման ու նոյեմբերի 9-ին ստանձնած պարտավորությունները գործի դնելու պահանջով:

Տաթեւիկ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ՀՀ քաղաքացիներն իրենց սահմանադրական իրավունքով կքրեականացնեն Արցախն այլ պետության մաս ճանաչելը. «ՀայաՔվե»

ՀՀ-ում սկսվել է աննախադեպ նախաձեռնություն, երբ ՀՀ քաղաքացիների ձայների ուժով նախատեսվում է օրենսդրական փոփոխություններ կատարել ՀՀ օրենքում: Օրենսդրական փոփոխությունները ԱԺ կմտնեն համապատասխան քանակի ստորագրությունների առկայության դեպքում:

Հանրաքվեի մասին ՀՀ Սահմանադրական օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական նախաձեռնության կարգով Ազգային ժողովին օրենքի նախագիծ առաջարկելու կամ ընդունած օրենքում փոփոխություն կատարելու օրենքի նախագիծը հանրաքվեի դնելու համար կազմավորվում է առնվազն 25 քաղաքացուց բաղկացած նախաձեռնող խումբ:

Օրենսդրական փոփոխություններն առաջարկվել է կատարել «ՀայաՔվե» քաղաքացիական նախաձեռնության կողմից, երբ հունիսի 12-ին նախաձեռնության 66 անդամներ օրենսդրական փոփոխությունների փաթեթը ներկայացրել են ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողով: «ՀայաՔվե» նախաձեռնությունը համակարգում է Ավետիք Չալաբյանը, իսկ նախաձեռնության լիազոր ներկայացուցիչը Արամ Պետրոսյանն է:

Նախաձեռնող խումբը հիմնվում է ՀՀ Անկախության հռչակագրի, ՀՀ Սահմանադրության եւ ՀՀ Գերագույն խորհրդի 1992թ. հուլիսի 8-ի որոշումների վրա եւ պահանջում է քրեականացնել Արցախը ՀՀ անունից այլ երկրի կազմում ճանաչելու գործողությունները, ինչպես նաեւ քրեականացնել Հայոց ցեղասպանությունից հրաժարվելը՝ վերահաստատելով, որ Արցախի ու Հայաստանի հանրապետությունների միավորումը եւ Հայոց ցեղասպանության ճանաչումը մեր պետության կողմից սահմանված անժամկետ համազգային նպատակներն են:

«ՀայաՔվե» քաղաքացիական նախաձեռնությունը պահանջում է օրենսդրությամբ ամրագրել, որ Հայաստանի Հանրապետության անունից Արցախը այլ պետության մաս ճանաչող պաշտոնատար անձը պատժվում է 10-15 տարի ազատազրկմամբ: Նույն պատիժը սահմանվում է Հայոց ցեղասպանությունից հրաժարված պաշտոնատար անձի համար:

Հունիսի 20-ին ՀՀ ԿԸՀ-ի կողմից հաստատվել է «ՀայաՔվե» նախաձեռնող խմբի դիմումը եւ ստորագրահավաքի ժամկետ սահմանվել հունիսի 21-ից մինչեւ օգոստոսի 19-ը: Ստորագրահավաքի պաշտոնական մեկնարկը նախաձեռնող խմբի կողմից տրվել է հունիսի 29-ին:

Ստորագրահավաքին մասնակցելու համար 18 տարին լրացած ՀՀ քաղաքացիները պետք է ստորագրեն տեղական ինքնակառավարման մարմինների հաստատություններում՝ մարզպետարանում, համայնքապետարանում, թաղապետարանում՝ ստորագրությունը հաստատելով անձնագրային տվյալներով:

ՀՀ Սահմանադրության 109-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանվում է, որ ընտրական իրավունք ունեցող առնվազն 50.000 քաղաքացի ունի ԱԺ-ում քաղաքացիական նախաձեռնության կարգով օրենքի նախագիծ առաջարկելու իրավունք: Այսինքն՝ նախաձեռնող խումբն ունի 60

օր ժամանակ 50 000 ստորագրություն հավաքելու համար, որից հետո օրինագիծը պարտադիր կարգով մտնելու է ՀՀ ԱԺ օրակարգ եւ դրվելու է քվեարկության:

Եթե ՀՀ ԱԺ-ն դեմ արտահայտվի 50 000 քաղաքացիների դիմումին եւ մերժի նախագիծը, ապա նախաձեռնող խումբը պետք է հավաքի եւս 300 000 ստորագրություն, որից հետո նախագիծը դրվելու է հանրաքվեի:

Հանրաքվեի արդյունքում անհրաժեշտ ձայներ հավաքելուց հետո նախագիծն անմիջապես հրապարակվում է որպես օրենք, որը հետագայում կարող է փոփոխության ենթարկվել միմիայն նոր հանրաքվեի միջոցով:

«ՀայաՔվե»-ին մասնակցած բոլոր քաղաքացիները պարտադիր կերպով մասնակցության հավաստագիր են ստանում:

Ինչպես նշեցինք, ըստ օրենքի՝ ստորագրահավաքը պետք է անցկացվի բացառապես ՀՀ ՏԻՄ հաստատություններում, սակայն ինչպես նախաձեռնող խումբն է հայտարարել, ՀՀ իշխանությունները փորձել են արհեստական խոչընդոտներ ստեղծել նախաձեռնության իրականացման համար՝ հրաժարվելով ՏԻՄ հաստատություններում սենյակներ տրամադրելուց:

Այս պահին նախաձեռնությունը շարունակվում է ոչ միայն մայրաքաղաք Երեւանում, այլ նաեւ ՀՀ մարզերում:

«ՀայաՔվե» նախաձեռնության մեդիաթիմի ղեկավար Լիկա Թումանյանը մեզ հետ զրույցում նշեց, որ «ՀայաՔվե» նախաձեռնությունը սպասված էր հասարակության կողմից, քանի որ անգամ քննադատություններ են հնչում, թե ինչու այս նախաձեռնությունն ավելի շուտ չի կազմակերպվել:

«Այն կարծրատիպը, թե իբրեւ ժողովուրդն անտարբեր է, փաստացի կոտրվեց, եւ դա ակնհայտ է թե՛ մասնակից քաղաքացիների հոսքից, թե՛ տարբեր մարզերից ու համայնքներից ստորագրահավաքի նոր կետեր բացելու պահանջներից»,- ասել է Լ. Թումանյանը:

5 օրում «ՀայաՔվե» նախաձեռնությունը հավաքել է 15 000 ստորագրություն, ինչը մեդիաթիմի ղեկավարը

ոգեւորիչ է համարում, սակայն, ըստ նրա, մեծ է նաեւ հակաքարոզչության ալիքն ու դրա ազդեցությունը:

«Իշխանությունն օգտագործում է իր լծակների ողջ զինանոցը՝ մարդկանց ապակողմնորոշելու, պատերազմով սպառնալու, եւ նախագծի էությունը խեղաթյուրելու համար, ինչն, անշուշտ, ազդում է մասնակցության թվի վրա, որը կարող էր լինել շատ ավելի մեծ»,- նշել է Լ. Թումանյանը:

Հարցին, թե ի՞նչ կտա նախաձեռնությունն Արցախին, Լիկա Թումանյանը պատասխանել է, որ իրավական տեսանկյունից ստորագրահավաքը թույլ կտա կյանքի կոչել օրենսդրական այն նախագիծը, որով քրեականացվում է Արցախի հանձնումը եւ Հայոց ցեղասպանության ճանաչման նսեմացումը:

«Բարոյահոգեբանական տեսանկյունից՝ սա հայ հասարակության համար քաղաքական գործընթացի վրա ազդելու, անմասն չմնալու, իշխանությունների վարած քաղաքականությանը սեփական անհամաձայնությունն արտահայտելու գործուն միջոց է»,- ասել է նա:

«ՀայաՔվե» նախաձեռնությանն իրենց աջակցությունն են հայտնել նաեւ Հայաստանի եւ Արցախի կուսակցություններն ու հասարակական կազմակերպությունները:

ՀՅԴ Հայաստանի Գերագույն մարմնի հանրային կապերի պատասխանատու, ՀՀ Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության պատգամավոր Քրիստինե Վարդանյանը մեզ հետ զրույցում նշեց, որ ՀՅԴ Հայաստանի կառույցը, ողջունելով նախաձեռնության գաղափարը, իր ուժերի սահմաններում փորձում է նպաստել այս փուլում նախաձեռնության առջեւ դրված նպատակի իրագործմանը:

«ՀայաՔվե» նախաձեռնությանն իրենց աջակցությունն են հայտնել նաեւ ԱՀ Ազգային ժողովի խմբակցությունները՝ համատեղ հայտարարությամբ, որտեղ ասվում է.

«Հայաստանի Հանրապետության եւ Արցախի Հանրապետության կացության շուրջ ստեղծված աննախադեպ իրավիճակում այդ օրենսդրական նախաձեռնու-

թյունը կոչված է կանխելու Արցախի ժողովրդի հավաքական կամքի դրսեւորման անբեկանելի իրողությունը շրջանցելու որեւէ նկրտում: Այն երաշխավորում է հայ մարդուն իր երկրի ճակատագրական հարցերի լուծմանն անմիջական մասնակից լինելու սկզբունքային խնդիրը: Արցախի կարգավիճակը, ըստ այդմ էլ՝ արցախցիների անվտանգ ապրելու հիմնարար իրավունքի ապահովելը ՀՀ ներքին եւ արտաքին քաղաքականության առանցքային բաղադրիչը պետք է լինի: Լիահույս ենք, որ խելամիտ, համակողմանի քայլերի արդյունքում «ՀայաՔվե»-ն նշված ուղղություններում կունենա առանցքային նշանակություն: Սա ժողովրդի իշխանության օրինակելի նախաձեռնություն է, քանզի «Ամբողջ իշխանությունը պատկանում է ժողովրդին» արտահայտությունը ոչ թե մերկապարանոց լոզունգ է, այլ կիրառման ենթակա հզորագույն գործիք»:

Հուլիսի 15-ին Ստեփանակերտում տեղի ունեցած հանրահավաքի ժամանակ ԱՀ պետական նախարար Գուրգեն Ներսիսյանը նշել է, որ իր հետ կապ է հաստատել «ՀայաՔվե» նախաձեռնության համակարգող Ավետիք Չալաբյանը. կա ավելի քան 25000 ստորագրություն: Նոր կոչ է արել օգտագործել բոլոր հնարավորությունները Արցախի շահերը ներկայացնելու, պաշտպանելու համար:

Նախաձեռնությանը Արցախից ողջունել է նաեւ «Արցախի անվտանգության եւ զարգացման ճակատ» հանրային շարժումը: Տարածված հայտարարությամբ Ճակատը ողջունել է բոլոր այն նախաձեռնությունները, որոնք ուղղված են մեր ժողովրդի համար այս ծանր ժամանակահատվածում համազգային համախմբմանն ու միասնականության դրսեւորմանը:

««Հայաքվե»-ն թերեւս վերջին շրջանում հանրային համաձայնության ներքո իրականացվող հաջողված քաղաքացիական նախաձեռնություններից է, որի նպատակը Արցախի հանձնումը քրեականացնելն է եւ օրենքի ուժով այն արգելափակելը:

Ցավով ենք փաստում, որ նման նախաձեռնության առիթը Հայաստանի Հանրապետության գործող իշխանությունների կողմից վարվող ապազգային քաղաքականությունն է, որն Արցախը տանում է կործանման:

«Հայաքվե»-ն այդ սպառնալիքը իրավական ճանապարհով չեզոքացնելու կարեւոր գործընթաց է, որում հաջողելու համար անհրաժեշտ է բոլորիս մասնակցությունը:

Մենք ողջունում եւ «Հայաքվե»-ին ամեն կերպ աջակցելու կոչ ենք հղում ՀՀ տարածքում բնակվող բոլոր արցախցիներին, ծագումով արցախցի ՀՀ բոլոր քաղաքացիներին, Հայաստանի բոլոր մարզերում ու մայրաքաղաք Երեւանում ապրող մեր քույրերին ու եղբայրներին»,-ասվում է հայտարարության մեջ:

Հավելենք, որ նախաձեռնությանը կարող են մասնակցել նաեւ Արցախի Հանրապետության այն քաղաքացիները, ովքեր ունեն նույնականացման քարտ:

Վահագն ԽԱՉԱՏՐՅԱՆ

Արցախում խորացող ճգնաժամը. Ստեփանակերտ-Երեւան հեռուստակամուրջ-ասուլիս

Հուլիսի 6-ին հրավիրվել է Ստեփանակերտ-Երեւան հեռուստակամուրջ-ասուլիս՝ նվիրված շրջափակման հետեւանքով Արցախում խորացող ճգնաժամին: Ստեփանակերտում լրագրողների հարցերին պատասխանել են ԱՀ պետական նախարար Գուրգեն Ներսիսյանն ու Մարդու իրավունքների պաշտպան Գեղամ Ստեփանյանը, իսկ Երեւանում՝ ԱՀ արտաքին գործերի նախարար Սերգեյ Ղազարյանը, ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանը, Միջազգային իրավական հարցերով Հայաստանի ներկայացուցիչ Եղիշե Կիրակոսյանը:

Ասուլիսի ընթացքում ԱՀ պետական նախարարը ներկայացրել է շրջափակման հետեւանքով Արցախում ստեղծված վիճակը: «2022 թվականի դեկտեմբերի 12-ից սկսած՝ մինչեւ ընթացիկ տարվա հունիսի 15-ը Արցախ էր մտել չնչին քանակի սնունդ, որն ընդամենը բավարարել էր բնակչության նվազագույն կարիքները: Բնականաբար, այդ ամենին զուգահեռ կրճատվել էին մեր ներքին ռեսուրսները: Ավելի քան 20 օր է՝ արցախցի երեխաները, տարեցները, հղի կանայք զրկված են անհրաժեշտ քանակի միրգ ու բանջարեղեն օգտագործելու հնարավորությունից, բացակայում են տարրական հիգիենայի պարագաները, մարդիկ զրկված են հիվանդին բուժհաստատություն տեղափոխելու հնարավորությունից: Առաջին անհրաժեշտության պարագաները մի կերպ փորձ է արվում հավասարաչափ բաշխել ու հասցնել բնակիչներին, իսկ շրջաններում ապրող մեր քաղաքացիներն ամբողջությամբ կտրված են մայրաքաղաքից ու Ստեփանակերտի բուժհաստատություններ դիմելու հնարավորությունից»,- նշել է նա:

Ադրբեջանական կողմի ո՞ր քայլերն են հիմքեր տալիս հավատալու. Սերգեյ Ղազարյանը՝ ՀՀ-ում ԱՄՆ դեսպանի հայտարարության մասին

Ինչի՞ հիման վրա են հավատում, ադրբեջանական կողմի ո՞ր քայլերն են հիմքեր տալիս հավատալու, թե Ադրբեջանի կազմում հնարավոր է՝ Արցախն անվտանգ ապրի: Այս մասին հեռուստակամուրջ-ասուլիսի ժամանակ ասել է ԱՀ արտաքին գործերի նախարար Սերգեյ Ղազարյանը՝ պատասխանելով ՀՀ-ում ԱՄՆ-ի դեսպանի արած հայտարարության վերաբերյալ հարցին: Հայաստանում ԱՄՆ դեսպան Քրիստինա Քուինը Հանրային հեռուստաընկերությանը տված հարցազրույցում մեկնաբանել է այն մտավախությունները, որ եթե Ղարաբաղը լինի Ադրբեջանի կազմում, ապա այնտեղ ապրող հայերի անվտանգությունն ու իրավունքների պաշտպանությունն անհնարին կդառնան՝ հաշվի առնելով Ադրբեջանի վարած քաղաքականությունը:

Ի պատասխան՝ դեսպանը նշել է. «Հավատում ենք եւ հույս ունենք, որ դա հնարավոր է»:

ԱՀ արտաքին գերատեսչության ղեկավարի խոսքով՝ հակառակը պիտի լիներ. «Եթե որեւէ մեկը նման հույսեր ուներ, պիտի դա էլ կորցրած լիներ՝ տեսնելով այն ամենը, որ տեղի է ունեցել այս ամիսների ընթացքում»:

«Առաջին հերթին, Մինսկի խմբի համանախագահներից ակնկալում ենք շատ ավելի ակտիվ ներգրավվածություն՝ ոչ միայն հայտարարությունների կամ կոչերի մակարդակով, այլեւ գործուն քայլեր՝ հաշվի առնելով այն, որ ստեղծված իրավիճակի համար նրանք կրում են իրենց պատասխանատվության չափաբաժինը: Խոսքը վերաբերում է ցեղասպան քաղաքականությանը, էթնիկ զտումների կանխարգելմանը, իսկ այստեղ նրանք բոլորն ունեն իրենց պատասխանատվությունը: Սա ոչ թե նրանց իրավունքն է, այլ պատասխանատվությունը»,- նշել է Սերգեյ Ղազարյանը:

Արցախում ստեղծված իրավիճակի վերաբերյալ նամակներ ուղարկվում են ոչ միայն Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինին, այլ նաեւ տարբեր միջազգային կազմակերպությունների ղեկավարներին:

Արցախի արտաքին գործերի նախարարն անդրադարձել է Ադրբեջանի պահանջին՝ Արցախի Պաշտպանության բանակը լուծարելու մասին:

Սերգեյ Ղազարյանն ընդգծել է, որ Արցախյան հակամարտությանը ծանոթ անձինք գիտեն, որ Պաշտպանության բանակը տեղի բնակչության անվտանգությունն ապահովող կարեւորագույն գործոն է, ինչը փաստացի ապացուցվել է բազմաթիվ անգամ: «Տեսնելով, թե ինչպես են թափ առնում ադրբեջանական կողմի ագրեսիվ գործողությունները, սադրանքները, ագրեսիվ հռետորաբանությունը, ապա միանշանակ իրատեսական չէ քննարկել Պաշտպանության բանակի կամ պետական համակարգի լուծարման հարցը, ինչը որպես նախապայման առաջ է քաշում Ադրբեջանը»,- նշեց Ղազարյանը:

Խոսելով Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանի կողմից ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինին օրերս ուղարկված նամակի մասին՝ Սերգեյ Ղազարյանը նշեց, որ նման նամակներ պարբերաբար ուղարկվում են տարբեր միջազգային կազմակերպությունների ղեկավարներին ու քաղաքական գործիչներին: Ստեղծված իրավիճակում Արցախի իշխանությունը դիմել է նաեւ այդ քայլին, եւ ՀՀ վարչապետը ՌԴ նախագահի հետ իր հեռախոսազրույցի ժամանակ եւս մեկ անգամ ուշադրություն է հրավիրել ստեղծված իրավիճակի վրա:

Արցախի Հանրապետությունում ակնկալում են, որ ռուսական խաղաղապահ ուժերը, նոյեմբերի 9-ի հայտարարության պարտավորությունների շրջանակում, կգործադրեն բոլոր ջանքերը, որպեսզի Արցախը Հայաստանին կապող ճանապարհի արգելափակումն Ադրբեջանի կողմից վերացվի:

Ցանկալի կլինի, որ ՀՀ հանրային իշխանությունը ներկայացնողների կողմից նման հայտարարություններ չհնչեն

«Ապառաժ»-ը ՀՀ ՄԻՊ-ին հարց է ուղղել ՀՀ իշխանությունների եւ քպ-ական որոշ պատգամավորների հայտարարությունների մասին: Նրանց հակահայկական հայտարարություններին զուգահեռ՝ պետական որոշ պաշտոնյաների, ընդդիմադիր գործիչների կողմից աշխատանք է տարվում Արցախում տիրող իրավիճակը միջազգային գործընկերներին ներկայացնելու ուղղությամբ, եւ այդպիսի հայտարարությունները կարող են խոչընդոտել ՄԻՊ-ի աշխատանքներին:

«Մարդու իրավունքների պաշտպանը կառավարության, գործադիր, օրենսդիր իշխանության ներկայացուցիչ չէ, անկախ ապաքաղաքական պաշտոնատար անձ է: Հետեւաբար, ներկայացնում է ինքնուրույն եւ անկախ տեղեկատվություն՝ խնդիրների հետ կապված՝ անկախ բոլոր հայտարարություններից, որովհետեւ շատ դեպքերում դրանք քաղաքական բնույթի են, այդ թվում՝ արտաքին քաղաքական տարր են իրենց մեջ պարունակում եւ, բնականաբար, չեն կարող վերաբերելի լինել այս աշխատանքին»,- ի պատասխան ասել է ՀՀ ՄԻՊ-ը: Անահիտ Մինասյանը կարեւորել է, որ տեղեկատվությունը շարունակի մնալ անկախ եւ չընկալվի որպես գործադիր կամ օրենսդիր իշխանության կողմից ներկայացվող տեղեկատվություն:

Հարցին անդրադարձել է նաեւ ԱՀ ՄԻՊ Գեղամ Ստեփանյանը, ով, ի տարբերություն ՀՀ իր գործընկերոջ, խոստովանել է, որ տարբեր խորհրդարանականների կողմից արվող քաղաքական հայտարարությունները որոշակի խոչընդոտներ են հարուցում, երբ տարբեր քննարկումների ժամանակ հենց միջազգային գործընկերների կողմից վկայակոչվում, մատնանշվում են այդ հայտարարությունները: «Այս առումով՝ կարող եմ անվերապահորեն ասել, որ ցանկալի կլինի, որ ՀՀ հանրային իշխանությունը ներկայացնող մարմինների, կառույցների ու ներկայացուցիչների կողմից նման հայտարարություններ չհնչեն: Պետք է հնարավորինս ձեռնպահ մնալ այնպիսի հայտարարություններից, որոնք չեն բխում Արցախի ժողովրդի շահերից եւ կասկածի տակ են դնում Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքը, որը մեր պարագայում հավասարազոր է Արցախի ժողովրդի կյանքի իրավունքին»,- շեշտել է ԱՀ ՄԻՊ-ը:

Նա ավելացրել է, որ 7 ամիս շարունակ գտնվելով շրջափակման մեջ, չունենալով համապատասխան քանակությամբ ներկրումներ եւ իրականում օբյեկտիվորեն հնարավորություն չունենալով մեծ պաշարներ կուտակելու, այսօր արդեն ամբողջությամբ զրկված լինելով որեւէ տեսակի հումանիտար բեռնափոխադրումից՝ խոսքը գնում է գոյաբանական սպառնալիքի մասին: «Ես ուզում եմ, որ ՀՀ մեր հայրենակիցները եւ հայաստանյան հասարակությունը ճիշտ հասկանան, թե ինչ իրավիճակ է այսօր Արցախում: Մենք կարծես թե ամեն օր խոսում ենք այս ամենի մասին, բարձրաձայնում ենք, ահազանգում ենք, հարցազրույցներ ենք տալիս, բայց իրավիճակի լրջությունը, որ այսօր Արցախում ապրողների գլխին կախված է, անգամ հայաստանյան հասարակության մեջ ամբողջական չի ընկալվել: Ինձ համար անընդունելի է այն հանդարտությունը, որ կա Հայաստանում, երբեմն նաեւ հայկական Սփյուռքում՝ Արցախի ժողովրդի ճակատագրի վերաբերյալ: Եվս մեկ անգամ կուզեի շեշտել՝ պետք է զերծ մնալ այդ հայտարարություններից եւ գոնե չվնասելու տրամաբանությամբ առաջնորդվել»,- խոսքը եզրափակել է Գեղամ Ստեփանյանը:

Նման հայտարարությունները վարչական պատասխանատվություն են առաջացնում

Հակաճգնաժամային խորհուրդը ԱՀ Սահմանադրությամբ, օրենքներով ստեղծված մարմին չէ: Այս մասին հուլիսի 6-ի ասուլիսի ժամանակ նշել է ԱՀ պետական նախարար Գուրգեն Ներսիսյանը՝ պատասխանելով ԱՀ նախագահին կից ստեղծված հակաճգնաժամային խորհրդի նախագահ Տիգրան Պետրոսյանի՝ ֆեյսբուքյան էջում արած հայտարարությունների մասին «Ապառաժ»-ի հարցին: Խոսելով նման հրապարակումների հետեւանքով խուճապային տրամադրությունների տարածման մասին՝ Գուրգեն Ներսիսյանը նշել է, որ բազմաթիվ այդպիսի ապատեղեկատվություններ են եղել տարբեր ապրանքատեսակների հետ կապված, եւ ի վերջո ժամանակը ցույց է տվել, որ դրանք իրականությանը չեն համապատասխանում: «Եթե լինի որեւէ ապրանքատեսակի խնդիր, պարզ է, առաջինն այս մասին պետական մարմիններն են հայտարարելու: Այսօր ուղղակի անհնարին կլինի, եթե պետական մարմինները, այդ թվում՝ նաեւ ես՝ որպես պետական նախարար, անկեղծ չլինենք հասարակության հետ եւ իրական խնդիրները խորանալու դեպքում մեր հանրությանն ամենայն անկեղծությամբ չներկայացնենք: Ճիշտ չեմ համարում խուճապային տրամադրություններ ստեղծող տեղեկությունները, եւ կարծում եմ, որ նման իրավիճակում, ինչպես ռազմական դրության պայմաններում է սահմանված, պետք է հետեւել բացառապես պետական մարմինների կողմից ներկայացվող պաշտոնական տեղեկություններին»:

Նա ավելացրել է, որ հանրությանը ներկայացվող տեղեկությունները, որոնք նաեւ իրենց մեջ իրականությանը չհամապատասխանող հատվածներ են պարունակում, կամ՝ առհասարակ ամբողջապես իրականությանը չեն համապատասխանում, անընդունելի են. «Հատկապես մերօրյա ներքին լարվածության պայմաններում, երբ մարդիկ ստեղծված իրավիճակում բավականին դյուրագրգիռ են, ցանկացած ապատեղեկատվություն հետագայում անմիջապես պետության համար հավելյալ խնդիրներ է ստեղծում: Ակնանատեսը եղանք ալյուրի հետ կապված տեղեկատվության տարածմանը, եւ մենք մեկերկու օր ստիպված եղանք աշխատելու, ավելի շատ ռեսուրսներ տրամադրելու, քան սովորական պայմանների համար: Եթե քաղաքացին ներքին ու արտաքին անվտանգությանն առնչվող հարցերին վերաբերող հայտարարություններ է անում, ապա պարտադիր պետք է հղում կատարել պետական մարմինների պաշտոնական հաղորդագրությանը, հակառակ պարագայում նման արարքները առաջացնում են վարչական պատասխանատվություն»:

Հավելենք, որ ըստ ԱՀ նախագահի մայիսի 26-ի հրամանագրի՝ սահմանափակվում է կարծիքի արտահայտման ազատությունը, արգելվում են տեղեկատվության որեւէ միջոցով Արցախի Հանրապետության պաշտպանունակության, անվտանգության, տարածքային ամբողջականության, ինքնիշխանության, սահմանադրական կամ հասարակական կարգի, տնտեսության բնականոն զարգացման վերաբերյալ տեղեկություններ փնտրելը, ստանալը եւ տարածելը, այդ թվում՝ դրանց դեմ ուղղված քարոզչությունը:

Տաթեւիկ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Արցախյան կյանքի կարոտով

Ճանկաթաղ-Չինգաթաղ-Ջանիաթաղ-Ջանյաթաղ-Ճանկաթաղ: Մեծ հայքի Արցախ նահանգից հայտնի այս գյուղն իր պատմության ընթացքում հաճախ է անվանափոխ եղել, սակայն, ի վերջո, այսօր այն նորից կրում է իր հին անունը՝ Ճանկաթաղ: Լեռնային այս գյուղը հայտնի է իր տասնյակ աղբյուրներով, հնագույն պատմամշակութային կոթողներով, պղնձի մեծ պաշարներով:

Գյուղում անցկացված պեղումների արդյունքում հայտնաբերվել է Ք.ա. 2-1-ին հազարամյակների Սբ. Սարգիս դամբարանաբլուրը, ինչպես նաեւ գյուղից 1,5 կմ դեպի հարավ-արեւմուտք պահպանվել է Ք.ա. 1-ին հազարամյակի դամբարանադաշտը, միջնադարի «Ցանցաղ», 1 կմ դեպի հարավ-արեւմուտք՝ Ք.ա. 2-1-ին հազարամյակի «Ծովատեղ», Ք.հ. 1-ին դարի «Ցանցաղ» դամբարանաբլուրը, Ք.ա.2-1-ին հազարամյակների «Աննա նահատակ» խոյակը:

Ըստ Ճանկաթաղի միջնակարգ դպրոցի պատմության ուսուցիչ Վրեժ Խաչատրյանի՝ գյուղի ներկայիս բնակիչները Ճանկաթաղում հաստատվել են 1800-ական թվականներից:

«Գյուղի բնակիչները Պարսկահայաստանի Ղարադաղ Նահանգից են գաղթել այստեղ: Նախկինում այստեղ եւս եղել է հայկական գյուղ, սակայն ռուս-պարսկական պատերազմից հետո գյուղի բնիկները դարձել են Ղարադաղից գաղթած հայերը»,- պատմել է նա:

Հնագետ Մակար Բարխուդարյանը Ճանկաթաղի մասին հետեւյալ գրությունն է թողել.

«Ճանկաթաղ, կամ, ըստ օտարահնչիւն ձայնին, Ջանեաթաղ գյուղն, հիմնված է մի ձորի աջ ու ձախ լանջերի վերայ նոյն լեռնաշղթայի արեւելեան կողմում Ղազանչու հյուսիսային կողմում, բնակիչները գաղթած են Պարսկաստանի Ղարադաղ նահանգի Ամրաղիւլ եւ Քիւվնի գիւղերից Պասգեւիչի ժամանակ. եկեղեցին Սուրբ Գէւորգ, Ծուխ 85. ար. 390. իգ. 338»:

Գյուղը կառուցվել է այդ տարածքում հայտնաբերված սբ. Սարգիս եկեղեցու շուրջ:

«Եկեղեցին, որը վերանորոգվել է ճանկաթաղցի Էդիկ եւ Տամելա Սարգսյանների կողմից, շատ հին պատմություն ունի: Մարդիկ իրենց բնակավայրը կառուցել են եկեղեցու շուրջ, որի վրա փորագրված էր Ճանկաթաղ, եւ հենց դրա անունով էլ գյուղը կոչվել է Ճանկաթաղ, հետագայում գրվել է Ջանիաթաղ, իսկ վերջերս նորից անվանափոխվել է Ճանկաթաղի»,- ասել է Վ. Խաչատրյանը:

Ճանկաթաղն իր մասնակցությունն է ունեցել Արցախյան բոլոր պատերազմներին: 1988-199թթ. Ճանկաթաղում կազմավորված կամավորական ջոկատն իր մասնակցությունն է ունենում Շահումյանի եւ Մարտակերտի շրջանների ինքնապաշտպանական եւ ազատագրական մարտերին: Թշնամու գործողությունների հետեւանքով գյուղը տարհանվել է 1992թ. ամռանը, սակայն կրկին ազատագրվել 1994թ.: Առաջին պատերազմում գյուղից նահատակվել է 18 ազատամարտիկ: Գյուղը կորուստներ է ունեցել նաեւ 2020թ. 44-օրյա պատերազմում:

«2020թ. դաժան պատերազմի ընթացքում գյուղն ունեցել է 6 զոհ: Նրանցից 2-ն ամուսնացած էին եւ ունեին երեխաներ, իսկ 3-ը նշանված էին եւ պետք է ամուսնանային»,- ցավով նշել է Վ. Խաչատրյանը:

Այդ պատերազմի հետեւանքով գյուղը դարձել է սահմանամերձ: Գյուղի սահմաններում թշնամին կառուցել է 3 դիրք, որտեղից էլ դիտարկում է ամբողջ գյուղը: Այդ դիրքերից թշնամին հաճախակի է անկանոն կրակոցներ արձակում՝ փորձելով խուճապի մատնել գյուղացիներին: Վերջերս թշնամու կողմից արձակված կրակոցները վնասել են նաեւ գյուղի տները:

«Վերջին ժամանակներում ավելի հաճախակի են դարձել կրակոցները: Հիմնականում դիրքերի ուղղությամբ են կրակոցները լինում, երբ մեր դիրքապահները փորձում են ինժեներական աշխատանքներ կատարել»,- ասել է Վ. Խաչատրյանը:

Գյուղացիների հիմնական զբաղմունքը մինչ պատերազմը եղել է հողագործությունն ու անասնապահությունը, իսկ մի մասն աշխատում էր նաեւ գյուղի հարակից հանքավայրում, սակայն պատերազմից հետո գյուղին շատ մոտ տեղակայված ադրբեջանցիները խոչընդոտում են գյուղատնտեսական աշխատանքները, իսկ Արցախի շրջափակման պատճառով դադարեցվել են աշխատանքները հանքավայրում:

«Պատերազմի պատճառով գյուղին պատկանող շատ տարածքներ գտնվում են թշնամու վերահսկողության տակ, իսկ մյուս մասն էլ դիտարկվում է նրանց կողմից, ուստի գյուղատնտեսական աշխատանքներ կատարել չենք կարողանում: Դիրքերը, որ այսօր կառուցել են նրանք, մեր գյուղին պատկանող տարածքներում են կառուցել: Մինչեւ առաջին պատերազմը իրենք այդ տարածքներում դիրքեր չեն ունեցել, այլ դրանից ավելի ներքեւ: Մեր մեծերն ասում են, որ Խորհրդային Միության ժամանակներից գիտեին, որ գետնի տակ ածուխ կա, եւ սահմանը եղել է հենց այդ վայրը, իսկ հիմա քարտեզներով եկել հասել են այստեղ: Այսօր գյուղին պատկանող հողերը չեն մշակվում, թողնվել են խոտհարքի համար, բայց հիմա նույնիսկ դա էլ չեն թողնում: Գնում ենք, որպեսզի խոտը հնձնեք, թողնում են՝ մինչեւ ամբողջը հնձում ենք, իսկ երբ գնում ենք հավաքելու՝ արդեն չեն թողնում: Անցած տարի ռուս խաղաղապահների միջնորդությամբ կարողացանք հավաքել դաշտի խոտը»,- նշել է ուսուցիչը:

Նրա խոսքով՝ գյուղացիները չեն կարողանում նաեւ խոշոր անասուններ պահել, որովհետեւ հաճախ են անցնում թշնամու վերահսկողության տակ գտնվող տարածքներ: Գյուղացիները հիմնականում զբաղվում են մանր եղջերավոր անասուններ բուծելով եւ տնամերձ հողերը մշակելով:

«Շրջափակումից հետո մարդիկ, համեմատած նախորդ տարիներին, ավելի շատ են սկսել ուշադրություն դարձնել եւ զբաղվել հողագործությամբ, սակայն ջրի խնդիրը մի քիչ խնդիրներ է ստեղծում»,- ասել է Վ. Խաչատրյանը:

Գյուղի տարածքը վերջերս ենթարկվել է նաեւ ուժեղ կարկտահարության: Ըստ Վ. Խաչատրյանի՝ բարեբախտաբար ամբողջ գյուղի տարածքը չի կարկտահարվել, այլ միայն գյուղի վերեւի հատվածը, որտեղ էլ մասամբ ոչնչացվել են որոշ ջերմոցներ, վնասվել ծառեր:

Այս պայմաններում, երբ թշնամին վերահսկողության տակ է վերցրել գյուղին պատկանող հողերի մեծ մասը, կարեւորվում է ջերմոցային տնտեսությունների օգտագործումը: Գյուղում գործում են 20-ից ավելի ջերմոցներ, որտեղ գյուղացիներն աճեցնում են լոլիկ, վարունգ եւ կանաչի:

Արցախի շրջափակման հետեւանքով ստեղծված՝ հոսանքի անբավարարության խնդիրը հնարավոր է լինում լուծել այլընտրանքային էներգիայի աղբյուրների հաշվին: Ճանկաթաղում տեղադրվել են արեւային ջրատաքացուցիչներ, որոնց աշխատանքի մասին գոհունակությամբ են արտահայտվում գյուղացիները, եւ այդ համակարգերն աստիճանաբար մեծ պահանջարկ են ստանում: Վ. Խաչատրյանի խոսքով՝ այն հատկապես մեծ նշանակություն կստանա առաջիկա ձմեռվա ընթացքում:

«Գյուղում նոր ջրագիծ են կառուցել, մնում էր միացման աշխատանքները կատարեին, որից հետո այդ խնդիրն էլ կլուծվեր, սակայն աշխատանքները դադարեցվել են շրջափակման հետեւանքով շինանյութերի սղության պատճառով»,- պարզաբանել է Վ. Խաչատրյանը:

Ճանկաթաղում գործում է համայնքապետարան, բուժկետ, միջնակարգ դպրոց, մշակույթի տուն:

Վ. Խաչատրյանը գյուղի հիմնական խնդիրը համարել է ջրի սակավության հարցը:

Շրջափակման պայմաններում ի հայտ է եկել նաեւ հանրային տրանսպորտից օգտվելու՝ գյուղացիների անհնարինության հարցը, իսկ տեղացած սելավներն էլ քանդել են գյուղամիջյան ճանապարհները:

Անդրադառնալով բերքահավաքի աշխատանքներին, Վ. Խաչատրյանը նշել է, որ գյուղում առկա է անհրաժեշտ գյուղատեխնիկան, իսկ բերքահավաքի աշխատանքները կազմակերպելու համար շրջանի վարչական ղեկավարությունը պետք է տրամադրի անհրաժեշտ վառելիքը:

Ըստ Վ. Խաչատրյանի՝ գյուղում արտագաղթելու տրամադրություններ չկան, պատերազմից հետո բոլորն իրենց տեղում են:

«Բնակիչների հետ շփումներից հասկանում ենք, որ նման մտադրություններ չկան: Պարզապես պետք է անվտանգության հարցերը կարողանանք կարգավորել, լուծել ապաստարանների հարցը, որպեսզի կրակոցների ժամանակ ժողովուրդը պատշտպանվելու տեղ ունենա»,-նշել է Վ. Խաչատրյանը:

Թեեւ գյուղի տարածքում տեղակայված է ռուս խաղաղապահ զորախմբի ռազմաբազան, սակայն դա չի խանգարում թշնամուն՝ ուզած ժամանակ կրակ բացել գյուղի ուղղությամբ:

Կրակոցներ եղել են նաեւ գյուղի դպրոցի ուղղությամբ, որտեղ ուսում են առնում գյուղի երեխաները, եւ դա չի խանգարում նրանց՝ բարձր առաջադիմություն ցուցաբերել եւ հաղթել մրցույթներում:

«Դպրոցի աշակերտները կարողանում են իրենց հատկացված մեքենայով այցելել Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն, մասնակցել դասընթացներին: Գյուղում բացվել է կարատեի խմբակ: 14 տարեկանների խմբում՝ վերջերս շախմատի անհատական մրցաշարում դպրոցի աշակերտներից մեկը զբաղեցրել է առաջին տեղը»,- ասել է ուսուցիչը:

Ըստ նրա՝ դպրոցում առկա է աշխարհագրության եւ ֆիզկուլտուրայի մասնագետների խնդիր: Խոսելով գյուղի մշակութային կյանքի մասին՝ նա նշել է, որ դպրոցի ներսում կազմակերպվում են մշակութային միջոցառումներ, սակայն հանրային միջոցառումներ իրականացնել չեն կարողանում թշնամու նշանառության տակ գտնվելու պատճառով:

Ճանկաթաղ գյուղի բնակչուհի Գրետա տատիկը, ով վերջին պատերազմում կորցրել է իր թոռանը, չի հասկանում, թե ինչ տրամաբանությամբ են մեզ առաջարկում ապրել թուրքերի հետ, երբ մենք նրանց էինք սպանում, իրենք մեզ:

«Թուրքի հետ ապրել չի լինի: Ղարաբաղն ինտեգրվի՞, բայց հետո ո՞վ կմնա: Հնում թուրքերի հետ ապրել ենք, առեւտուր ենք արել, բայց հիմա նրանք արդեն մեր թշնամիներն են: Հիմա վախենում ենք անգամ տնից դուրս գալ: Դիրքերից հայհոյում են մեզ, լսում, թե տանը ինչ ենք խոսում: Հիմա ասում են Ղարաբաղը թուրքերինն է, նրանց հե՞տ պիտի ապրեք»,- ասում է Գրետա տատիկը:

Նա չի ուզում լքել հայրենի տունը, բայց չի էլ ուզում թուրքերի հետ ապրել:

«Ես կուզեի թեկուզ մի փոքր կացարան ունենայի, բայց իմ հողում լինեի: Մենք շատ բան չենք ուզում, ուզում ենք մեր գյուղում մնանք, մեր տանն ապրենք, չոր հաց ուտենք, բայց թուրքի հետ չենք ուզում ապրել»,- նշել է նա:

Պատերազմից հետո Ճանկաթաղում վերաբնակեցվել է 3 ընտանիք, 2-ը՝ Նոր Մարաղայից, 1-ը՝ Կարմիրավանից:

Վարդանյան Լուսինեի ընտանիքը Ճանկաթաղում հաստատվել է պատերազմից հետո: Նրանք ՀՀ-ից Արցախ են տեղափոխվել 2014-ին: Ադրբեջանական վերջին կրակոցների արդյունքում բեկորները հասել են նաեւ նրանց տուն ու վնասել այն:

«ՀՀ-ից տեղափոխվել ենք Նոր Մարաղա 2014-ին ձկնաբուծարանում աշխատելու համար: Պատերազմից հետո տեղափոխվեցինք Հայաստան, 2 ամիս մնացինք այնտեղ, հետո հետ եկանք Արցախ՝ Ճանկաթաղ»,- պատմել է Լ. Վարդանյանը:

Նրա խոսքով՝ Արցախ տեղափոխվել են, որովհետեւ Նոր Մարաղայում կապված էին բնակիչներին, շփվում էին նրանց հետ, եւ երբ նրանք վերադարձան, Լուսինեն ու իր ընտանիքն էլ որոշեցին վերադառնալ:

«Այնտեղ բնակվող ընտանիքներից մեկի հայրական գյուղն է Ճանկաթաղը, նրանց հետ էլ վերադարձանք ու հաստատվեցինք Ճանկաթաղում: Ամուսինս փորձում էր հանքում աշխատանք գտնել՝ չստացվեց, հետո բանակում սկսեց աշխատել: Աղջիկս դպրոց, տղաս համալսարան է հաճախում, ես էլ տան աշխատանքներով, բանջարեղենի մշակությամբ եմ զբաղվում»,- նշել է նա:

Խոսելով շրջափակման ստեղծած խնդիրների մասին՝ Լուսինեն նշեց, որ կարողանում են խնդիրներին լուծումներ գտնել, բացի այդ, նրանց ավելի շատ մտահոգում են ոչ թե կենցաղային խնդիրները, այլ՝ անվտանգայինը:

«Շրջափակման ամենադժվար խնդիրը՝ դա հոգեբանական խնդիրի հաղթահարումն է: Առանց սննդի էլ մի բան կանենք, միայն թե խաղաղություն լինի: Խնդիրներ կան, որոնց մոտ սննդի հարցը չի էլ երեւում»,- ասել է Լ. Վարդանյանը:

Անդրադառնալով իր՝ ապագայի մասին ունեցած տեսլականին, Լուսինեն նշեց, որ հատկապես վերջին դեպքերից հետո սկսել են վաղվա մասին չմտածել:

«Մինչ վերջին դեպքերը, երբ բեկորներն ընկան մեր տան վրա, ես նույնիսկ կրակոցների տակ շարունակում էի աշխատել, բայց այդ դեպքից հետո արդեն չեմ թողնում երեխաները բակում խաղան կամ այգի գնան»,- եզրափակել է նա:

Վահագն ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիշում ենք ու խոնարհվում. Արտակ Իշխանյանի ծննդյան 30-ամյակը

Հուլիսի 3-ին լրացել է Արտակ Իշխանյանի ծննդյան 30-ամյա տարելիցը: 1993թ. հենց այս օրն է Մարտունու շրջանի Աշան գյուղում ծնվել ՀՅԴ եւ ուղեկից կառույցների շարքերում պատանեկան տարիներից ակտիվ գործունեություն ծավալած Արտակ Իշխանյանը:

Հարազատ գյուղի հուշահամալիրում նրա հիշատակի օրը կազմակերպվել է հուշ-ցերեկույթ: Ելույթ են ունեցել Աշանի Անիթա Հովսեփյանի անվան դպրոցի սաները, ՀՅԴ երիտասարդական ու պատանեկան միությունների, Հայ մարմնակրթական ընդհանուր միության (ՀՄԸՄ) Արցախի միավորի անդամներ:

Իր խոսքում ՀՅԴ ԱԵՄ-ի Կենտրոնական վարչության անդամ Տիրուհի Գասպարյանը նշել է, որ հոգու մեծ կսկիծով են այսօր շնորհավորում սիրելի ընկերոջ ծննդյան 30-ամյակը, գլուխ խոնարհում նրա անմար հիշատակի առջեւ. «Սերն առ հայրենիք՝ կիսատ չի լինում. կամ սիրում են, կամ՝ ոչ: Հայրենիքի հարատեւման համար մեր հայորդիները մշտապես ստիպված են եղել պատերազմել թշնամու դեմ: Այդ իսկ պատճառով ոչ ոք չգիտի խաղաղության գինն այնքան լավ, որքան մենք: Ինչպես Արցախի հերոս Ալեն Մարգարյանն է ասել. «Պատերազմն աշխարհի ամենաբարձրաճաշակ սիրահարն է. այն միշտ տանում է լավագույններին»: Այդ լավագույններից էր նաեւ Արտակ Իշխանյանը»:

ՀՅԴ պատանեկան, երիտասարդական միությունների դպրոցով անցած Արտակ Իշխանյանը, իր երդմանը հավատարիմ մշտապես ծառայել է Դաշնակցության գաղափարներին: Նա կենացներում լուռ էր, իսկ ՀՅԴ Արցախի երիտասարդական միության, կուսակցության ու ՀՄԸՄ Արցախի մեկուսի մասնաճյուղի շարքերում՝ մշտապես համախմբողի եւ ոգեւորողի դերում:

Միջոցառման ընթացում ՀՅԴ Արցախի երիտասարդական միության անդամ Մարթա Չիլինգարյանն արտասանել է Արտակ Իշխանյանի հիշատակին նվիրված՝ իր հեղինակային բանաստեղծությունը:

ՀՄԸՄ-ի Արցախի մեկուսի մասնաճյուղի մի խումբ անդամներ համալրել են խմբապետերի շարքը՝ երդման համար ընտրելով խորհրդանշական վայր ու օր՝ մասնաճյուղի վարչության անդամ Արտակ Իշխանյանի հայրենի գյուղն ու նրա ծննդյան օրը: Հայ մարմնակրթական ընդհանուր միության Արցախի մեկուսի մասնաճյուղի Կենտրոնական վարչության ատենապետ Դավիթ Գրիգորյանի համար դժվար էր խոսք փոխանցելը, որովհետեւ Արտակն իր ու իր ընտանիքի համար հարազատ անձնավորություն էր:

«Արտակը լուռ տեսակ էր. նա գործով էր ապացուցում իր մարդ տեսակը: Չէր սիրում բողոքել, բամբասել, լուռ կատարում էր իր առջեւ դրված պարտականությունը: Նա մեծ ներդրում ունի ՀՄԸՄ-ի Արցախի միավորի կազմավորման գործում, ու ինձ բախտ է վիճակվել 2019թ. նրա հետ Արցախում այս կառույցի հիմքը դնել»,- նշել է նա:

Աշանի դպրոցի տնօրեն Մխիթար Շինդյանը, համբերություն մաղթելով բոլոր նահատակների ընտանիքներին ու հարազատներին, նշել է, որ Արտակն իր ընկերների հետ միասին իր կյանքը տվել է, որ գոնե այս իրավիճակում կարողանանք ապրել այս հողի վրա: «Դեռեւս հստակություն չկա, ամեն ինչ մշուշոտ է, բայց տեսնելով մեր երիտասարդներին, աշակերտներին՝ վստահաբար նայում ենք դեպի ապագան ու հույս պահում, որ ամեն ինչ կընկնի իր տեղը, որովհետեւ մենք իրավունք չունենք թողնելու, որ թափված արյունն իզուր անցնի»,- իր խոսքում նշել է նա:

Արտակ Իշխանյանի ծննդյան օրվա առթիվ կազմակերպվել է նաեւ հրաձգության մրցույթ: ՀՅԴ Արցախի պատանեկան միության, ՀՄԸՄ-ի Արցախի միավորի անդամներից ու Աշան գյուղի դպրոցականներից լավագույն արդյունքներ գրանցած մասնակիցները պարգեւատրվել են պատվոգրերով:

Արտակը նահատակվել է 2020թ. հոկտեմբերի 31-ին՝ Մարտունի քաղաքի մոտակայքում, անօդաչուի հարվածից: Նահատակված 7 տղաների մարտական դիրքը վեր է ածվել սրբատեղիի, կանգնեցվել է խաչքար-հուշարձան, իսկ շրջակայքը բարեկարգվել է ու խնամվել:

Իր մեջ ամփոփում էր գերդաստանի լավագույն հատկանիշները

Արտակի հորեղբայր Դավիթ Իշխանյանը պատահական չի համարում նրա ծնունդը 1993թ. հուլիսի 3-ին: «Այդ օրերին Աղդամի շրջանի մարտական գործողությունների սկիզբն էր, եւ ես լավ հիշում եմ, թե որքան ուրախություն պատճառեց Արտակի ծնունդը ոչ միայն իր հորը, մորը, իրենց ընտանիքին, այլ նաեւ՝ մեզ բոլորիս: Այդ ծնունդը նաեւ Աղդամի գործողության սկիզբն էր, եւ արդեն իսկ մի քանի շաբաթ հետո ազատագրված Աղդամը տեսնելով հանդերձ, մենք կարողացանք վայելել Արտակի քառասունքի արարողությունը: Ասել, որ մանկությունը շատ ուրախ, կենսախինդ էր, բնականաբար մի քիչ դժվար է, որովհետեւ պատերազմի այդ բուռն շրջանում հայր ծնողի ոչ ամենօրյա իր որդու մոտ լինելն ակնհայտորեն իր ազդեցությունն էր թողել»,- հիշում է Դավիթ Իշխանյանը:

Նրա խոսքով՝ Արտակն իր մեջ ամփոփում էր գերդաստանի բոլոր լավագույն հատկանիշները. «Իր սառնասրտությունը, լրջությունը, համեստությունը, որոշում կայացնելու ունակությունը, նաեւ հայրենիքի նկատմամբ սերը. այս բոլորն ամբողջացնում էր Արտակի կերպարը: Ընդհանրապես անարդարությունների դեմ ուներ պայքարելու հատուկ ունակություն եւ ջիղ, չէր հանդուրժում անարդարությունը»:

Պատերազմի օրերին Դավիթ Իշխանյանը տարբեր առիթներով 3-րդ պաշտպանական շրջանում այցելում էր Արտակին՝ թե որպես հարազատի եւ թե որպես զինվորներից մեկի: «Շատ կենսախինդ էր, հետաքրքիր տրամադրվածությամբ, հաղթանակի եւ հաղթելու տրամադրվածությամբ, փորձում էր նաեւ իմանալ՝ ինչ է կատարվում ընդհանուր ռազմաճակատում, քանի որ նրանք ամբողջական պատկերացում չունեին կապի համապատասխան միջոցների բացակայության պատճառով: Փորձում էր նաեւ հասկանալ, թե ինչ կարող էր հավելյալ անել՝ տեղեկանալով նաեւ հարավային ուղղությամբ մեր անհաջողությունների, տարածքային եւ մարդկային կորուստների մասին: Հետաքրքիր էր իր նահատակվելուց երկու առաջ մեր ունեցած զրույցը: Ասում էր՝ պատերազմի առաջին օրերին հրետանին մի ուղղությամբ էր օգտագործվում, աստիճանաբար այդ անկյունը մեծացավ եւ դարձավ 180 աստիճան, հիմա 360 աստիճանով ենք մեր համազարկերն ուղղում, ի՞նչ է կատարվում: Ես փորձեցի իրավիճակը ամբողջական չներկայացնել, որպեսզի իր հոգեբանական վիճակի վրա ազդեցություն չունենա, բայց, այնուհանդերձ տեսնում էի, որ ինքը հասկանում էր ամբողջական պատկերը»,- իր հիշողություններով է կիսվում Դ. Իշխանյանը:

Չէր սիրում, որ իր մասին առանձին շեշտվեր

Արտակ Իշխանյանը 2007 թվականից անդամակցել է ՀՅԴ պատանեկան միության Աշանի խմբին, իսկ 2010 թվականից՝ ՀՅԴ Արցախի երիտասարդական միության անդամ էր:

2016թ. դեկտեմբերի 26-ին երդվել եւ համալրել է ՀՅԴ կուսակցության շարքերը:

2010-2020թթ. ակտիվ գործունեություն է ծավալել Արցախի երիտասարդական միության շարքերում եւ ՀՅԴ կուսակցության՝ թե որպես ՀՅԴ ԱԵՄ-ի Կենտրոնական վարչության անդամ եւ թե որպես Ստեփանակերտի «Արթուր Մկրչտյան» կոմիտեության «Արամ Մանուկյան» խմբի խմբապետ: Ընդգրկված է եղել Հայ մարմնակրթական ընդհանուր միության Արցախի նորաստեղծ միավորի վարչության կազմում:

Արտակի գաղափարական ընկերներից Մանուշակ Բալասանյանը նրա հետ ծանոթացել է ՀՅԴ Արցախի երիտասարդական միությունում. «Արտակին կարող եմ բնութագրել որպես շատ պատասխանատու, բարեսիրտ անձնավորություն: Երիտասարդականի ցանկացած գործի մեջ ինքը պարտադիր անմիջական մասնակցություն ուներ, կազմակերպիչների մեջ էր, եւ իր ակտիվ աշխատանքով այնպես էր անում, որ մենք էլ ընդգրկվեինք աշխատանքի մեջ: Մեր վրա դրված աշխատանքին երբ ինչ-որ մեկը, օրինակ՝ ես, բողոքում էի, ասում էր, որ եթե պարտականությունը դրված է քո վրա, ուրեմն գիտենք, որ դու կարող ես անել: Ինքը, լինելով տարիքով ինձանից փոքր, օրինակ էր հանդիսանում, որ մենք էլ կարողանանք իր պես աշխատել, իր պես պատասխանատու լինել»:

«Արտակն այն եզակի մարդկանցից էր, որ ամեն աշխատանք իր ուսերին էր վերցնում, բայց երբեք չէր սիրում, որ իր մասին առանձին շեշտվեր»,- հիշում է Մանուշակը:

ՀՅԴ Արցախի երիտասարդական միության ընդհանուր հավաքի ժամանակ է Արտակ Իշխանյանի հետ ծանոթացել Գեղանուշ Սարգսյանը: «Նա մի քանի ամիս առաջ էր զորացրվել բանակից եւ վերականգնվել երիտասարդական միության շարքերում: Մենք մի խմբի անդամ էինք եւ շատ երկար ժամանակ գործեցինք այդ խմբում: Յուրաքանչյուր ծրագիր կազմակերպելու ժամանակ նա պատրաստակամ էր, ամենափոքր մանրուքին ուշադիր հետեւում էր եւ անգամ արշավներից մինչեւ Ցեղասպանության զոհերի հիշատակին երթերի կազմակերպումը նա առաջին շարքերում էր, հիմնական կազմակերպիչն էր»:

Ընկերական հավաքների ժամանակ Արտակը շատ էր պատմում իր մանկության հերոսների՝ Արմեն Ավագյանի, Մոնթեի, Մերուժան Մոսիյանի մասին: Եվ այն, ինչ ինքը գիտեր դաշնակցական հերոսների մասին, փորձում էր փոխանցել ընկերներին:

Ընկերները փաստում են՝ երիտասարդական միության մեջ իր գործունեության ընթացքում նա պատասխանատու էր ամեն գործում եւ միշտ առաջին շարքերում էր գտնվում: Որպես ընկեր՝ նա նվիրված էր, հոգատար, եւ երիտասարդական միության շարքերի յուրաքանչյուր անհատի հանդեպ լցված էր մեծ հոգատարությամբ եւ հարգանքով: Իր համար Դաշնակցության գրասենյակը տուն էր, եւ օրվա մեծ մասը նա այնտեղ էր անցկացնում, քննարկում հասարակական-քաղաքական բազմաթիվ ծրագրեր, եւ այդ ծրագրերի հիմնական դերակատարն ինքն էր:

«Չնայած նա ֆիզիկապես մեզ հետ չէ, բայց յուրաքանչյուր օր, գրասենյակ մտնելու ժամանակ, մենք պատկերացնում ենք, թե ինքը որտեղ էր նստում եւ ինչպես էր մեզ հետ խոսում, ինչ հումորներով էր պատմություններ պատմում եւ, ընդհանրապես, ինչ գաղափարի կրող էր ինքը: Երբեմն նաեւ մեր՝ երիտասարդական միություն մտնող նորագիրների մեջ փնտրում ենք նմանատիպ կերպարներ: Այդ կերպարի մարմնացումն է նաեւ իր որդին՝ Ռուբենը. նաեւ իր հայացքի ու շարժուձեւի մեջ երբեմն փնտրում ենք Արտակին: Նա միշտ մեզ հետ է եւ հավիտյան կմնա, նրա գործը պիտի շարունակեն մեր սերունդները եւ նրա մասին պիտի պատմենք յուրաքանչյուր անհատի, ով որ Դաշնակցության գաղափարի կրողը պետք է լինի»,- ասում է Գեղանուշը:

→ 7

Հիշում ենք ու խոնարհվում. Արտակ Իշխանյանի ծննդյան 30-ամյակն էր

6 ←

Ընկերոջ իդեալ էր

Արտակի ընկեր Հակոբ Գրիգորյանը փոքրուց ընկերոջ մեջ գնահատում էր արդարության զգացումը, կազմակերպչական ջիղը: «Երեխա ժամանակվանից այդ հավասարակշռվածությունը, զուսպ լինելը իր մեջ կար: Փոքր տարիքում էլ նրա մտածելակերպը մյուսների նման չէր, ինքն ավելի լուրջ էր մոտենում հարցին: Ընդհանրապես ինքը լուրջ էր, հազվադեպ էր ծիծաղում ինչ-որ բանի վրա, հիմնականում անեն ինչին լուրջ էր մոտենում»,- նշում է ընկերը:

«Թե ապրիլյան քառօրյայի, թե վերջին պատերազմի ժամանակ՝ հենց առաջին կրակոցները լսում էինք, առաջինը զանգում էր ինձ եւ պայմանավորվում էինք, որ պետք է իջնենք համայնքապետարան եւ այնտեղից որոշեն, թե ուր պիտի գնանք: Նա ընդհանրապես դուխով էր ամեն հարցում, չէր վախենում պատերազմ, առաջնագիծ գնալուց, բայց վերջին պատերազմի ժամանակ տրամադրությունն այն չէր: Ես առաջին անգամ եմ իր մոտ նկատել, որ կարծես թե ինչ-որ մի բանից վախենում է: Հասկացա, որ ինչպես նախորդ պատերազմի ժամանակ՝ ինքն արդեն մենակ չէր, ընտանիք ուներ»,- պատմում է Հակոբը:

Նա չի համակերպվում այն մտքի հետ, որ ընկերը չկա, եւ նրա խորհուրդների կարիքը շատ է զգում. «Ինչ նախաձեռնում էի, առաջինը նրան էի տեղյակ պահում, նրանից էի խորհուրդ հարցնում. ինքն ինձ համար հենասյուն էր: Ինձ թվում է՝ տարիները կապ չունեն, ինչքան էլ անցնի, այդ բացը հնարավոր չէ լրացնել: Շատ դեպքերում ես չեմ կարողանում գտնել իմ հարցերի պատասխանները, բայց մտածում եմ, որ այդ հարցերի պատասխանները Արտակից կստանայի: Ինձ թվում է՝ այդ բացը հնարավոր չէ լրացնել, որովհետեւ ինքը յուրահատուկ մարդ էր, նրա նման ես չեմ հանդիպել: Նա ընկերոջ իդեալ էր. մենք էլ կուզենայինք նմանվել իրեն,

կարողանայինք իր պես ընկերություն անել, իր պես նվիրվել»:

Մանկության ընկերներից Արթուր Գրիգորյանի խոսքով՝ Արտակը շատ լավ ֆուտբոլ էր խաղում, թիմի ավագն էր, ու համարյա միշտ հաղթում էին հարեւան գյուղերի թիմերին:

Արտակը երկու պատերազմներին էլ կամավոր է մեկնել դիրքեր: «Ապրիլյանի ժամանակ առաջին իսկ պահից մեկնել է իր դիրքեր, եղել է հրետանավոր, ինչքան պետք է՝ դրանից ավելի մնացել է, հետո եկել տուն: Նույն կերպ կամավոր մեկնել է նաեւ 44-օրյա պատերազմի ժամանակ: Դպրոցում լավ էր սովորում, այդ հաշվարկները կարողանում էր լավ կատարել: Ինքը զինվոր ժամանակ էլ է լավ ծառայել, պատվոգրերով վերադարձել»,- ասում է ընկերը:

Արթուրի խոսքով՝ նա չէր կարող տեղում լիներ ու գլուխ պահեր. «Իրենք անօդաչուների ձայները լսում էին, եթե գլուխ պահող լիներ, ինքը կնստեր, զինվորներին կասեր գնացեք բեռները թափեք կամ հեռու կկանգներ ու կասեր՝ ոչինչ, ես հաջորդին կգնամ: Առաջինն ինքը եւ իր հետ եղած տղաներն են բարձրացել ու սկսել դատարկել, մնացածը հերթում կանգնած էին»:

Իր հաշվարկով կարողացավ ճնշել հակառակորդին

Հոկտեմբերի 31-ին զինամթերքով բարձած բեռնատարը բեռնաթափելու ժամանակ է տեղի ունեցել մահացու դեպքը: Բարյաքթարի հարվածից 5 զինծայողները զոհվեցին, երկուսը մահացան ստացած վերքերից: Տվյալ զորամասի դիվիզիոնի հրամանատարի բարոյահոգեբանական ապահովման գծով տեղակալ Գրիգորի Ասրյանը Արտակ Իշխանյանին բնորոշում է որպես բազմաշնորհ, պատրաստակամ զինծառայող: «Ընկերասեր էր, ժպտերես, անշահախնդիր բոլորին օգնում էր, զարգացած էր թե՛ գաղափարապես, թե՛ քաղաքականապես: Իր մարտական առաջադրանքները կատարում էր անթերի, իր հաշվարկով կարողացանք ճնշել հակառակորդին: Իր առջեւ դրված ցանկացած խնդիր անվերապահորեն էր կատարում: Հավատարիմ մնաց իր երդմանը՝ մինչեւ վերջ պայքարելով՝ կյանքը նվիրաբերեց մեր հայրենիքին»:

Արտակն ամուսնացած էր, ունի մեկ որդի: Արտակի աճյունն ամփոփված է Եռաբլուր զինվորական պանթեոնում:

2020թ. պատերազմի ժամանակ Արցախի Հանրապետության սահմանը պաշտպանելիս ցուցաբերած արիության, խիզախության եւ բացառիկ քաջության համար հետմահու պարգեւատրվել է «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով:

Տաթեւիկ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Այս պայմաններում բանակումը եւս մի փորձություն էր սկաուտների եւ պատասխանատու կազմի համար

2019թ. օգոստոսի 22-ին Արցախի Հանրապետության մայրաքաղաք Ստեփանակերտում տեղի է ունեցել Հայ մարմնակրթական ընդհանուր միության Արցախի մեկուսի մասնաճյուղի հիմնադրումը, որով Արցախի սկաուտները միացան համաշխարհային հայ սկաուտական ընտանիքին: Ցավոք, դրան հաջորդած իրադարձությունները՝ կորոնավիրուսի համավարակը, այնուհետեւ՝ 44-օրյա պատերազմը, մեծ խոչընդոտ հանդիսացան կառույցի զարգացման եւ ընդլայնման համար, ինչով եւ պայմանավորվեց մասնաճյուղի պասիվ գործունեությունը:

Պատերազմից հետո սկաուտական աշխատանքների ակտիվացման, առաջնորդ սկաուտներ պատրաստելու առաքելությամբ Արցախում էր սկաուտական խմբապետուհի Մարո Քեշիշյանը: Քույր Մարոյի եւ ՀՄԸՄ-ի Կենտրոնական եւ Արցախի մեկուսի վարչության ներդրած ջանքերով այսօր ՀՄԸՄ Արցախի մեկուսի մասնաճյուղը ակտիվ գործունեությամբ զբաղվող կառույց է:

Արցախի համար այս դժվարին ժամանակներում անգնահատելի է ՀՄԸՄ առաքելությունը բարոյապես բարձր արժանիքներով եւ ազգային նկարագրով հայրենիքին ծառայելու պատրաստ քաղաքացիներ պատրաստելու գործում:

ՀՄԸՄ Արցախի մեկուսի մասնաճյուղի գործունեության եւ վերջերս կազմակերպած սկաուտական-խմբապետական բանակումի մասին զրուցել ենք ՀՄԸՄ Արցախի մեկուսի մասնաճյուղի վարչության անդամ Արմոնդ Թահմասյանի եւ խմբապետ Ալյոնա Հակոբջանյանի հետ:

«Հատկապես այս օրերին՝ ՀՄԸՄ-ն Արցախում իրականացնում է իր գործունեությունը, նախ եւ առաջ՝ նպատակ ունենալով այս իրավիճակում օգնել երեխաներին՝ ավելի ուրախ կազմակերպել իրենց առօրյան, ստանալ նոր գիտելիքներ ու հմտություններ»,- մեզ հետ զրույցում նշել է Ա. Հակոբջանյանը:

Սույն թվականի հուլիսի 2-7-ը տեղի է ունեցել ՀՄԸՄ սկաուտական խմբապետական բանակումը, որն Արցախում թվով 2-րդն էր:

«Նմանատիպ առաջին բանակումը կազմակերպվել էր նախորդ տարի: Քույր Մարո Քեշիշյանը, ով եկել էր ԱՄՆ-ից, վերակազմակերպեց ՀՄԸՄ Արցախի կառույցը, ստեղծեց խմբապետական կազմ, ովքեր մեկ տարի շարունակ գիտելիքներով զինվելով, այս ամռանը պատրաստված եկան սկաուտական խմբապետական բանակումի»,-ասել է Ա. Հակոբջանյանը:

Նրա խոսքով՝ բանակումի ընթացքում սկաուտների ամենասիրելի պահը հերթապահությունն էր: «Նրանք շուրջօրյա հերթապահություն էին անցկացնում բանակավայրի տարբեր մասերում՝ հսկելով ՀՄԸՄ դրոշը, որը ամենակարեւորն էր բանակումի ընթացքում»,- նշել է Ա. Հակոբջանյանը:

Ալյոնա Հակոբջանյանը նշեց, որ բանակումի ընթացքում սկաուտների շարքերը համալրել են 3 նորագիրներ, իսկ սկաուտներից 3-ի կոչումներն էլ բարձրացվեցլ են առաջնորդից դառնալով վարիչ առաջնորդ:

«Այս բանակումը խմբապետների համար եւս վերապատրաստման շրջան էր, որպեսզի հետագայում կարողանան ինքնուրույն կազմակերպել հաջորդ բանակումը նորեկների հետ, որը տեղի կունենա ս.թ. հուլիսի 23-28-ը: Շուրջ 100 պատանու համար սկաուտները կկազմակերպեն բանակում, որտեղ հենց իրենք կլինեն պատասխանատուները»,- ասել է Ա. Հակոբջանյանը:

Նրա խոսքով՝ շրջափակման պայմաններում բավականին խոչընդոտների հանդիպեցին բանակումը կազմակերպելիս՝ հաշվի առնելով հատկապես սննդի բացակայությունն ու վառելիքի սղությունը, սակայն, ամեն դեպքում՝ բանակումը հաջողությամբ կյանքի կոչվեց:

«Արցախի համար դժվարին այս պայմաններում բանակումը եւս մի փորձություն էր սկաուտների եւ պատասխանատու կազմի համար, որը մենք կարողացանք պատվով հաղթահարել: Բանակումի 5 օրերը անմոռաց կմնան սկաուտների հիշողության մեջ, որպես այս մշուշոտ ներկայում լուսավոր մի դրվագ»,- նշել է Ա. Հակոբջանյանը:

ՀՄԸՄ Արցախի մեկուսի մասնաճյուղի վարչության անդամ Արմոնդ Թահմասյանն էլ նշեց, որ պատերազմը բավականին բացասական ազդեցություն է թողել ՀՄԸՄ աշխատանքների կազմակերպման վրա:

«Պատերազմից հետո որոշ սկաուտներ տեղափոխվեցին արտասահման, խնդիր առաջացավ կառույցը նորից վերաակտիվացնելու: Քույր Մարո Քեշիշյանի հինգամսյա աշխատանքի արդյունքում մենք ունեցանք այն կորիզը, որի վրա հիմնվելով էլ մենք այսօր կազմակերպում ենք մեր աշխատանքները»,- ասել է Ա. Թահմասյանը:

Նրա խոսքով՝ կառույցն այսօր ոչ թե առաջնորդվում է քանակական աճ ապահովելու ուղղությամբ, այլ տեսական եւ գործնական գիտելիքներով օժտված սկաուտներ պատրաստելու ուղղությամբ:

«Հատկապես այս բանակումին, թեկուզ եւ սեղմ ժամանակաընթացքում, ծրագրեցինք եւ կարողացանք իրականացնել մեր առջեւ դրած նպատակները: Սկաուտները պետք է գիտելիքներ ունենան թե՛ գործնական, թե՛ տեսական, որոնք հետագայում անպայմանորեն ստուգվում են քննությունների միջոցով»,- նշել է նա:

Ա. Թահմասյանի խոսքով՝ բանակումի նպատակը վարիչ-առաջնորդներ պատրաստելն էր: «Մեր գործը նրանց սովորել սովորեցնելն էր: Բանակումի ընթացքում հիմնականում ազգային գաղափարոխոսության եւ կարգապահության վրա ենք կենտրոնացնել: Նրանք սովորել են ենթարկվել հրամաններին, անհարկի չխոսել, ավելի շատ լսել, ընկալել, սովորել են դիմանալ դժվարություններին ու կոփվել:

Բանակումի ընթացքում ձեռք բերված հմտություններով՝ առաջնորդները մեր վերահսկողությամբ կազմակերպելու են բանակում, եւ արդեն իրենք պետք է իրենց գիտելիքները փոխանցեն նորեկներին»,- ասել է Ա. Թահմասյանը:

Նա ճամբարն արդյունավետ համարեց՝ հաշվի առնելով կարճ ժամանակամիջոցում տեսանելի առաջխաղացումը, համարելով, որ բացթողումներ բոլորի մոտ են լինում: Խոսելով սկաուտների ոգեւորության եւ առաջ գնալու ձգտման մասին՝ Ա. Թահմասյանը նշեց, որ առաջնորդների հետ առանձին հանդիպումները ստիպում են մյուսներին, որ ցանկություն ունենան նմանվել նրանց:

«Աստիճաններով բարձրանալու համար նրանք պետք է սովորեն եւ համապատասխան գիտելիքներ ունենան: Շաբաթական ծրագրեր ունենք տեսական եւ գործնական դասընթացներով, որոնք ամփոփվում են քննությունների միջոցով: Այդ ամենից բացի, նրանց կարգապահությանն ենք ուշադրություն դարձնում՝ նախքան կոչումը բարձրացնելը»,- եզրափակել է նա:

Վահագն ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՅԴ որոշում. Սուլթանի մահափորձ

1894-96 թվականների կոտորածները համաշխարհային պատմության մեծագույն ոճրագործություններից են, եւ որակվում են՝ որպես ցեղասպանության ակտ: Այն կանխելու եւ վրեժխնդիր լինելու պատիվը ստանձնեց ՀՅԴ կառույցը՝ 4-րդ Ընդհանուր ժողովի որոշմամբ:

1878թ. Սան Ստեֆանոյի պայմանագրով եւ 1878թ. Բեռլինի դաշնագրով Աբդուլ Համիդը պարտավորվում է բարեփոխումներ անցկացնել Արեւմտյան Հայաստանում: Սուլթանը, սակայն, արհամարհում է ստանձնած պարտավորությունները:

Հայ բնակչության բողոքներին հետեւում են 1894-96թթ. հայկական կոտորածները, որոնց համար նա ստանում է «կարմիր սուլթան» մականունը: Հայերի կոտորածի միջոցով թուրքական կառավարությունը նպատակ է ունեցել վերջնական լուծել հայկական հարցը: Զեյթունում, Սասունում, Վանում տեղի են ունեցել մի քանի ինքնապաշտպանական մարտեր, որոնք ճնշվել են արյան մեջ: Համիդյան ջարդերի ժամանակ սպանվել է շուրջ 300 000 հայ, 100 000՝ բռնի իսլամացվել, 100 000՝ տարագրվել տարբեր երկրներ, ամայացել են Արեւմտյան Հայաստանի եւ Օսմանյան կայսրության հայաբնակ վայրերը, սաստկացել է հայ ժողովրդի ազգային եւ տնտեսական ճնշումը:

Օսմանյան կայսրության սուլթան Աբդուլ Համիդ II-ի սպանության փորձը հայտնի է նաեւ՝ «Եըլտըզի» մահափորձ, քանի որ այն ծրագրվում էր իրականացվել 1905թ. հուլիսի 21-ին Ստամբուլի Եըլտըզ մզկիթում:

Եըլտըզի մահափորձն իրականացվել է 1905թ. Եըլտըզի պալատի մոտ գտնվող Սուլթանիե մզկիթի բակում: Դեռեւս 1896 թվականին՝ Համիդյան կոտորածներից հետո, Հայ Հեղափոխական Դաշնակցությունը եւ Հնչակյան կուսակցությունն իրարից անկախ ընդունել էին Աբդուլ Համիդ II-ին մահապատժի ենթարկելու որոշում: Այդ ժամանակ՝ 1896թ. փետրվարին, ՀՅԴ-ն ամենամոտն էր Աբդուլ Համիդի մահապատժի իրականացմանը, սակայն նոր կոտորածների տեղիք չտալու համար ծրագիրը հետաձգվել է:

Հետագայում Քրիստափոր Միքայելյանի կողմից այս հարցը վերաբացվել է: Նրա համար սկզբունքային էր՝ ձեւավորել մի խումբ, անցնել Կոստանդնուպոլիս եւ իրականացնել Աբդուլ Համիդի սպանությունը: ՀՅԴ-ի 4-րդ Ընդհանուր ժողովի ժամանակ՝ 1904 թվականին, երբ զուգահեռ ընթանում էր Սասունի ապստամբությունը, նորից որոշում է ընդունվել պատուհասել սուլթանին, ինչը պետք է լրացուցիչ հնչեղություն հաղորդեր Սասունի ապստամբությանը եւ այն դարձներ միջազգային խնդիր:

Գործողությունն ստացել է «Նժույգի գործ» անվանումը, որի միայն մի մասն էր կազմում Եըլտըզի մահափորձը: Նախքան Կոստանդնուպոլիս անցնելը Ցուցական մարմինը ժողովներ է գումարում Աթենքում եւ Պիրեայում, որտեղ քննարկվում են մահապատժի իրագործման ուղիները, նոր անդամներ հրավիրելու, Կոստանդնուպոլիս մտնելու, անդամների պարտականությունների եւ իրավունքների սահմանման հարցերը: Ցուցական մարմնի կանոնադրության 13-րդ կետը նշում էր, որ սուլթանին ահաբեկելու որոշումը Ցուցական մարմնի կողմից պետք է ընտրվի միաձայն: Հրավիրվեցին մի շարք գործիչներ, որոնք իրենց գործի վարպետներն էին: Նրանց թվում էին Ռուբինա Արեշյանը, Մարի Զայցը, տիկին Անչուկովան, Քրիս Ֆանարջյանը, Համբարձում Աղաջանյանը (Կարո), Սարգիս Բարսեղյանը (Վանա Սարգիս), Լեւոն Գյուլումյանը, Գրիգոր Սայանը (Ջահիլ), Սամաթիացի Զարեհը, Արամ Անդրեասյանը եւ այլք:

Կանանց հրավիրելը պատահական չէր, քանի որ որոշվել էր Կոստանդնուպոլիս մտնել՝ որպես այլազգի եւ կանանց ուղեկցությամբ: Այս ամենի պատճառն այն էր, որ Կոստանդնուպոլիս որպես հայ մտնելը կարող էր լրտեսների ուշադրությունը գրավել: Քրիստափորը Կոստանդնուպոլիս է մտնում հրեա Սամուել Ֆայնի անցագրով՝ իր «աղջկա»՝ Ռուբինա Ֆայնի (Արեշյան) ուղեկցությամբ: Սաֆոն մայրաքաղաք մտավ գերմանացի Լիփա Ռիփսի անցագրով՝ իր «կնոջ»՝ Մարի Ռիփսի (Զայց) ուղեկցությամբ, Թորգոմը եւ Աշոտը՝ որպես ուկրաինացի կալվածատեր Յուվանովիչ ազգանվամբ: Իսկ քանի որ Հովնան Դավթյանի կնոջ հիվանդությունը թույլ չտվեց նրան մասնակցել գործողությանը եւ նրան փոխարինեց Վռամշապուհ Քենդիրյանը, նա դարձավ մարմնի հինգերորդ անդամը:

Ցուցական մարմինը որոշել էր սուլթանին ահաբեկելու զուգահեռ ահաբեկչություններ կատարել նաեւ Զմյուռնիայում, որի նպատակը հայկական հարցին էլ ավելի մեծ հնչեղություն հաղորդելն էր: Դա իրագործելու համար Զմյուռնիայում ստեղծվեց Գործադիր մարմինը: Սուլթանին ահաբեկելու համար Ցուցական մարմինը դիտարկում էր երկու տարբերակ. դրանցից առաջինը տարեկան տարբերակն էր: Ըստ դրա՝ մահափորձը պետք է ի կատար ածվեր այն ժամանակ, երբ սուլթանը՝ որպես մուսուլմանների առաջնորդ՝ խալիֆ, գնում էր իր հավատակիցներին այցելության: Դա տեղի էր ունենում տարին երկու անգամ, ինչը բարդացնում էր գործողության իրականացումը: Մյուս տարբերակը ամեն ուրբաթ տեղի ունեցող սելամլըքի ժամանակ ահաբեկչության իրականացումն էր:

Լինելով մոլեռանդ մուսուլման՝ սուլթանը պետք է մասնակցեր այս կրոնական միջոցառմանը, սակայն չուզենալով ամեն անգամ դրա համար գնալ Կոստանդնուպոլիս՝ նա Եըլտըզի մոտ կառուցել էր Սուլթանիե մզկիթը եւ այնտեղ էր գնում ծեսերի ժամանակ: Եըլտըզից մինչեւ Սուլթանիե մզկիթ ընկած ճանապարհը այդ օրերին ամբողջովին հսկվում էր թուրքական զորքի կողմից: Մզկիթից 60-70 քայլ հեռու գտնվում էր մի տաղավար, որը նախատեսված էր օտարերկրացիների համար: Այնտեղ տեղ գտնելու համար անհրաժեշտ էր դիմել սեփական երկրի դեսպանատուն եւ տեղ ամրագրել:

Դիտարկելով այս երկու տարբերակները՝ հասկանալի էր, որ առաջին տարբերակը անհրագործելի է, ինչից հետո ընտրվում է երկրորդը: Այս ամենից հետո անդամները սկսում են քննարկել մահափորձի իրականացման եղանակը: Դիտարկվում էր երկու տարբերակ. օտարերկրացիների համար նախապատրաստված տաղավարից ձեռնառումբեր նետել սուլթանի վրա,

կամ մզկիթի բակում մի կառք կանգնեցնել, որի մեջ կլիներ մեծ քանակությամբ պայթուցիկ նյութ՝ մելինիտին: Քննարկումներից հետո որոշվեց միաժամանակ երկու տարբերակն էլ կատարել:

Ձեռնառումբերի պատրաստումը հապաղում էր, որի համար Քրիստափոր Միքայելյանը մեկնում է Բուլղարիա եւ սկսում ինքնուրույն զբաղվել դրանց պատրաստությամբ: Իսկ կառք-ռումբի պատրաստության համար Ցուցական մարմնին հաջողվում է Կոստանդնուպոլիս տեղափոխել 204 կգ մելինիտին, որը 20-րդ դարասկզբին համարվում էր ամենաուժեղ պայթուցիկ նյութը: 1905 թվականի փետրվարին տեղի ունեցող ՀՅԴ-ի խորհրդի նիստին մասնակցելու համար Վռամշապուհ Քենդիրյանը, որը, ըստ ծրագրի, լինելու էր տաղավարից ձեռնառումբ նետողներից մեկը, անցավ Եվրոպա: Քրիստափորը նրան հրավիրում է Սոֆիայից քիչ հեռու գտնվող Վիտոշա լեռան լանջ՝ իր պատրաստած ձեռնառումբերը ցուցադրելու համար: Սակայն ձեռնառումբերի հերթական փորձարկման ժամանակ՝ 1905 թվականի մարտի 4-ին (նոր տոմարով փետրվարի 17), զոհվում են Քրիստափոր Միքայելյանը եւ Վռամշապուհ Քենդիրյանը: Այս ամենից հետո Քննական մարմինը որոշեց շարունակել Քրիստափորի սկսած գործը: Տեղի ունեցածից հետո Քննական մարմնի մոտ սասանվեց ձեռնառումբերի հանդեպ ունեցած հավատը, եւ որոշվեց մահափորձը իրականացնել միայն ռումբ-կառքի օգնությամբ: Գործողության ղեկավարումը իր վրա է վերցնում Սաֆոն, որը մեկնում է Ժնեւ եւ Փարիզ, հանդիպում ռումբերի մասնագետների հետ եւ առանց գործողության մասին մանրամասներ բացահայտելու՝ ճշտում՝ ինչքան մելինիտին է անհրաժեշտ ահաբեկչությունն իրականացնելու համար: Ըստ տվյալների՝ անհրաժեշտ էր շուրջ 20 կգ մելինիտին գործը գլուխ բերելու համար, իսկ Ցուցական մարմինը ռումբ-կառքի համար օգտագործում է 124 կգ մելինիտին: Սաֆոն Ժնեւից անցնում է Վիեննա եւ պատվիրում մի շքեղ կառք, որը 1905 թվականի մայիսին արդեն գտնվում է Կոստանդնուպոլսում: Հետագա հաշվարկները ցույց են տալիս, որ սուլթանը մզկիթից դուրս էր գալիս շեփորները հնչելուց 1 րոպե 48 վայրկյան անց: Հենց այդ թվի վրա էլ պետք էր լարել կառքի ռումբը: Սկսվում է կառքի պատրաստումը. կառապանի նստոցի տակ տեղադրվում է 124 կգ մելինիտին, հարյուրավոր պատրույգներ, մի քանի կիլոգրամ երկաթյա կտորներ բեկորներ արձակելու համար:

Գործողության իրականացնողը պետք է որոշվեր վիճակահանության միջոցով: Դրա արդյունքում որոշվում է, որ Սամաթիացի Զարեհի հետ Եըլտըզի պալատ է մեկնելու եգիպտացի Արամը, որն էլ իրագործելու էր մահապատիժը, սակայն Ռուբինա Արեշյանը դժգոհում է եւ պահանջում իրեն հանձնել գործի ի կատար ածումը: Ի վերջո, նա կարողանում է հասնել իր նպատակին եւ գործը վստահվում է իրեն: Ցուցական մարմնի բոլոր անդաները եւ մնացած գործիչները հեռանում են Կոստանդնուպոլսից, որտեղ մնում են միայն Սաֆոն, Սամաթիացի Զարեհը եւ Ռուբինան:

Սակայն, պատահմամբ այդ օրը Սուլթան Համիդի աղոթատեղից գուրս գալու պահին, դռան առջեւ Շեյխ-ուլ-Իսլամ Ջալալեդդի էֆենդիի հետ տեսակցությունը սովորականից մի քիչ ավելի տեւեց: Շեյխ-ուլ-Իսլամի հետ ունեցած մի փոքր խոսակցությունն ուշացրեց Համիդին: Ռումբի պայթած պահին նա դեռ կառք նստելու համար դեպի սանդուղքներն էր ուղղվել:

1905 թվականի հուլիսի 21-ին Եըլտըզի Սուլթանիե մզկիթի բակում պայթում է կառք-ռումբը: Սաֆոն, Ռուբին ու Զարեհը նույն օրը եւեթ հեռացել էին Կոստանդնուպոլսից եւ մի քանի օր շարունակ չէին կարողանում իմանալ՝ արդյոք հաջողել է իրենց գործողությունը: Նրանք արդեն Սերբիայի տարածքում էին, երբ իմանում են գործողության ձախողման մասին: Սպանվել էր 26 եւ վիրավորվել 59 մարդ, որոնց թվում չկար Աբդուլ Համիդ II-ը: Զոհվել էր նաեւ մասնակից Զարեհը: Սուլթանի փրկությունը տեղական մամուլը հայտարարեց որպես «ալլահի կամքի դրսեւորում»: Սուլթանի կենսագիր Թեհսին հետագայում պատմում է, որ այդ օրը սութանը փոքր-ինչ շեղվել էր սովորական գրաֆիկից եւ շեփորների հնչելուց հետո մի փոքր զրուցել էր հոգեւոր առաջնորդի հետ:

Սուլթանի անհաջող մահափորձը սկզբում վերագրվեց նրա թուրք հակառակորդներին: Ձերբակալվեց գահաժառանգ Ռեշատը: Միայն մի քանի ամիս անց պարզ դարձավ, որ մահափորձի հեղինակը հայերն էին: Հետաքննության հետքերը տարան դեպի Զմյուռնիա եւ կառավարությունը կարողացավ բացահայտել այդ ձեռնարկները: 1905 թվականի վերջին Կոստանդնուպոլսում եւ Իզմիրում տեղի ունեցան դատավարություններ, որի ժամանակ Էդուարդ Ժորիսը տվեց ընդարձակ ցուցմունքներ: Դրանք ավելի շատ ապակողմնորոշեցին դատարանին: Նա ցուցմունքներ տվեց զոհվածների եւ Օսմանյան կայսրությունից արդեն հեռացած գործիչների մասին, որոնք արդեն վտանգից դուրս էին, սակայն ոչ մի խոսք չասաց տեղում մնացած եւ վտանգված գործիչների մասին: Այս ամենի արդյունքում Կոստանդնուպոլսի եւ Զմյուռնիայի գործերի ներկա եւ բացակա մեղադրյալների դեմ դատարանը ընդունեց մահապատժի որոշում, որը, սակայն, իրականություն չդարձավ:

Շուտով Էդուարդ Ժորիսի ձերբակալությունը Օսմանյան կայսրության վրա միջազգային ճնշումների առիթ դարձան: Եվրոպական դեսպանները Բաբը Ալիից (Բարձր Դուռ) եւ Սարայից պահանջեցին, որ Ժորիսի դատավարությունը տեղի ունենա քաղաքացիական դատարանում: Մահապատժի որոշման ընդունումից հետո եվրոպական երկրները պահանջեցին արտահանձնել Ժորիսին. այդ ճնշման տակ Թուրքիան ստիպված եղավ անել դա:

Աբդուլ Համիդի մահափորձին հետեւում է հաջորդ գործողությունը՝ 1905թ. փետրվարի 6-ին՝ Բանկ Օտոմանի գրավումը, Բաքվի նահանգապետ Նակաշիձեի սպանությունը, հետագայում՝ նաեւ Նեմեսիսը:

Ցավակցական

ՀՅԴ Արցախի Կենտրոնական կոմիտեի պաշտոնաթերթ «Ապառաժ»-ի աշխատակազմը իր խորին ցավակցությունն է հայտնում 2001 թվականից «Ապառաժ» թերթում պատասխանատու քարտուղարի, այնուհետեւ՝ խմբագրի պաշտոնը զբաղեցրած Արթուր Ավետիսյանի ընտանիքին, հարազատներին եւ բարեկամներին՝ իրենց կրած անդառնալի կորստի համար:

ՀՅԴ Արցախի ԿԿ պաշտոնաթերթ «Ապառաժ»

Հայտարարություն

Կորել է Սերգեյ Անդրեյի Համբարձումյանի՝ «Եզնիկ Մոզյան արհեստագործական ուսումնարան» հիմնադրամի կողմից 2020թ. տրված դիպլոմը:
Համարե՛լ անվավեր:

«Ապառաժ» երկշաբաթաթերթ
Ստեփանակերտ, Կնունյանցների 17,
հեռ. +374 97 38 43, E-mail: aparajtert@gmail.com
Կայքէջ՝ www.aparaj.am

Նյութերի համար պատասխանատու են հեղինակները: Թերթը կարող է տպագրել նաեւ նյութեր, որոնցում արծարծված տեսակետները չի կիսում:
Տպագրվում է Ստեփանակերտի «ԴԻԶԱԿ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ում:
Գրանցման վկայական՝ 04: Տպաքանակը՝ 700: Գինը՝ 100 դրամ:

Խմբագիր
Ա. Պուլուզյան